

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՈԳՈՒ, ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐՄՆԻ ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՐԹԱՆ, 2018 ԹՎ ՀՈՒԼԻՍԻ 4 - 31

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՈԳՈՒ, ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐՄՆԻ
ԵՌԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԲԱՑԱՐՁԱԿ-ՀՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՐԹԱՆ, 2018 Թ. ՀՈՒԼԻՍԻ 4 - 31

Բովանդակություն

Ի՞նչ է ՈԳԻՆ.....	4
ԼԻՆԵԼ ՈԳՈՒ ՄԵՁ.....	5
ՄԱՐՄՆԱՅՅԱԼ ՈԳԻ.....	6
Ի՞նչ է ՀՈԳԻՆ.....	8
ՀՈԳՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	9
ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈԳԻ.....	11
ՀՈԳՈՒ ՏՐՈՀՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆ ՈՒ ԻՄԱՍՏԸ.....	12
« ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ » ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈԳՈՒ ՀԵՏ.....	13
ՄԻԵՎՆՈՒՅՆ ՀՈԳՈՒ ԵՐԿՈՒ ԿԵՍԵՐԸ.....	15
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ.....	16
ՀՈԳՈՒ «ԾԱՌԸ».....	18
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՍ.....	19
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՍ.....	21
ՁԵՐ ՀՈԳՈՒ ՏԱՃԱՐԸ.....	22
ՄԻԱՁՈՒԼՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՍԻ ՀԵՏ.....	24
ՀՈԳՈՒ ԴԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ.....	25
ՄԱՐՄԻՆ.....	26
ՏԻԵՁԵՐՔԻ ՄԱՏՐԻՑԸ.....	28
ՉՈՐՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԱՐԴԸ.....	29
ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ԿՐԿՆԱԿՆԵՐ.....	31
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԻՐՏ.....	32
ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ.....	33
ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄ.....	35
ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՀԵՏ.....	36
ՎԵՐՁԱԲԱՆ.....	38

ԻՆՉ Է ՈԳԻՆ

Բարև, իմ սիրելի, անզին զավակներ:

Այսօր ես սկսում եմ ուղերձների նոր շարք, որը կկոչվի «Ոգու, Հոգու և Մարմնի եռամիասնությունը»:

Այս թեման շատ կարևոր է ձեզ համար, որովհետև տեսնում եմ, որ եռամիասնության հասկացությունն անասելի աղավաղումների է ենթարկվել դարերի ընթացքում, ինչի հետևանքով կորցրել է իր ճշմարիտ Աստվածային նշանակությունը:

Եվ այսպես, սկսենք ամենասկզբից:

Ի՞նչ է նշանակում այդ տերմինն ինքք: Ո՞րն է նրա սրբազան իմաստը:

Նախ և առաջ այն, որ լույս միավորելով Ոգին, Հոգին և Մարմինը, մարդը, հսկայական թռիչք գործելով իր հոգևոր զարգացման մեջ, կարող է գտնել իր Աստվածայնությունը, վերադառնալ իր ակունքը, որտեղից էլ է՝ դառնալ Աստվածամարդ:

Իսկ հիմա եկեք ավելի մանրամասն քննենք նրա մասերից յուրաքանչյուրը:

ՈԳԻ

Ի՞նչ է Ոգին: Ինչու՞ է հենց նա գրավում առաջին՝ գլխավոր տեղը այդ եռամիասնության մեջ: Ոգին ձեզ կյանք տվողն է: Աստվածային այն սուբստանցն է, որից բաղկացած է Երկրի երեսին եղած ամենայն կենդանի բան:

Նրանով է ներծծված բացարձակապես ամեն ինչ՝ օդը, ջուրը, հողը, բոլոր բույսերը, քարերը և, իհարկե, ողջ կենդանական աշխարհն ու մարդը՝ որպես Երկրի վրա եղած ամենայն կենդանիի արարման պսակ: Եվ որպես Ոգու գլխավոր կրող, նա պետք է դառնար Երկրի պահապանը, պիտի սիրեր, խնամեր ու փայփայեր Տիեզերքի այդ մարգարիտը՝ գոյություն ունեցող բոլոր մոլորակներից գեղեցկագույնը:

Իսկ փոխարենը նա դարձավ Երկրի գերեզմանափորը: Դա կատարվեց աննկատելիորեն, և այդ ողբերգության գլխավոր պատճառներից մեկը եղավ սրբազան Եռամիասնության՝ Ոգու, Հոգու և Մարմնի խզումը:

Որքան մարդու մեջ ոչնչացվում էր իր ոգեկան բաղադրիչը, այնքան ավելի էր առաջին պլան ելնում Մարմինը, որին մարդիկ նախ սկսեցին երկրպագել, իսկ հետո այնքան արժեզրկեցին, որ նույնիսկ առուծախի առարկա դարձրին:

Եվ հիմա եկել է այնպիսի մի պահ, երբ մարդու ձեռքով այս չքնաղ աշխարհ ներբերված բոլոր աղավաղումները հասցվել են անհերթթության. ամեն ինչ հասել է իր կրիտիկական ցուցանիշին, որից անդին սկսվում է քառսն ու ավերածությունը: Ուստի թե՛ ձեզ, թե՛ ձեր Երկրին անհրաժեշտ է վերագտնել Եռամիասնությունը:

Երկրի Ոգին . . .

Ինչպե՞ս զգալ այն:

Հաճելի ու տաք մի օր, երբ բնության գրկում կլինեք, խաղաղ, անմարդ մի վայրում փորձեք մեկնվել հողին՝ դեմքով դեպի երկինքը:

Իսկ հետո ուշադրություն դարձրեք ձեր զգացումներին, ինչպես է ձեր մարմնին զգվում խոտը, զեփյուռը դեմքն է շոյում, արեգակը ջերմացնում է, և դուք սուզվում եք երկնի լազուրի մեջ կամ հիանում անվերջ կերպափոխվող զարմանահրաշ ամպերով . . .

Տարրալուծվեք այդ զգացումների մեջ՝ մոռանալով ձեր բոլոր աշխարհիկ գործերը . . . Ամենայն հավանականությամբ դուք աննկարագրելի բավականություն կզգաք, և երանությունը կպարուրի ձեր ամբողջ մարմինը . . .

Դա է Երկրի Ոգին՝ Աստվածային սուբստանցը, որը ծնունդ է տվել նրան:

Եվ բնության բոլոր Ոգիները, որոնց մասին դուք հեքիաթներ ու առասպելներ եք հյուսում, սիրասուն զավակներն են իմ, որոնք արդեն ապրում են իրենց ուրույն կյանքով՝ հարմարվելով այնպիսի անսովոր հարևանի, ինչպիսին մարդն է:

Այսօր կբավարարվենք այսքանով:

ԼԻՆԵԼ ՈԳՈՒ ՄԵՋ

Եվ այսպես, շարունակենք մեր գրույցը Ոգու մասին և թե ինչպես կարող եք զգալ նրան ձեր մեջ:

Իրականում ամեն ինչ շատ պարզ է, որովհետև **Ոգին Մեր է**, Անպայման և Համապարփակ: Նա այն «Սկզբնանյութն» է՝ այն Աստվածային սուբստանցը, որից գոյանում են Տիեզերքները:

Եվ լուսավորության հասած, այսինքն այս էներգիայի հետ միաձուլված մարդն ընդունակ է ստեղծելու նոր տիեզերքներ, քանզի վերադարձել է իր սկզբնաղբյուրին՝ տարրալուծվել է Սիրո էներգիայի մեջ և միաժամանակ դարձել Սիրո «գեներատոր»։ նրա Հոգին էլել է Արարչի մակարդակին:

Բայց քանի դուք ապրում եք եռաչափ աշխարհում, սիրելիներս, պիտի սովորեք որսալ այս էներգիան և պահել ձեր մեջ որքան կարելի է երկար:

Եվ այսօր ես կտամ ձեզ մի քանի պրակտիկա, որոնք կօգնեն ձեզ դրանում:

Առաջին պրակտիկան կանվանենք «**Ոգու “ձայնը”**»: Այն շատ պարզ է և չի պահանջում մեղիտատիվ վիճակ: Որտեղ էլ որ լինեք, ինչ էլ որ անեք, ջանացեք «լսել» ձեր շրջակա տարածությանը՝ ոչ միտումնավոր, ոչ ստիպողաբար և ոչ էլ որովհետև այդպես է պետք:

Դա պիտի լինի թեթև ու բնական, մի տեսակ հպանցիկ և ականջի ծայրով: Եթե ձեզ հաջողվի, կզգաք, որ թեթև-թեթև մի զնգոց «ֆոնի» նման միշտ ուղեկցում է ձեզ: Նույնիսկ ոչ թե ականջներում, այլ շուրջը: Դուք զգում ու լսում եք այն ուրիշ զգայական օրգաններով՝ ոչ ֆիզիկական:

Այն չի խանգարում ձեզ, չի նյարդայնացնում, բայց նրանով թափանցված է ողջ տարածությունը, որը կարծես հյուսված լինի այդ կախարդական ձայնից: Եվ ամեն մարդ չի կարող այն որսալ, լույն սա, ում թրթիռները թույլ են տալիս:

Ումանց համար դա կարող է թրթիռային մակարդակի հրաշալի ինդիկատոր դառնալ. եթե ձայնն անորսալի է դարձել, ուրեմն ձեր թրթիռներն իջել են, եթե կրկին հայտնվել է, նշանակում է՝ ամեն ինչ կարգի է եկել:

Երկրորդ պրակտիկական կանվանենք **«Ոգին իմ մեջ»:**

Երբ որսաք (լսեք) Ոգին, պետք է ներս թողնեք նրան և պահեք ձեր մեջ որքան կարելի է երկար: Սա էլ կարելի անել հրնթացս՝ առօրյա գործերի հետ միաժամանակ: Փորձեք տարրալուծվել այդ Աստվածային ձայնի մեջ:

Պատկերացրեք, որ ձեր ողջ էներգետիկական տարածքը, ձեր ամբողջ մարմինը, մարմնի ամեն բջիջը լցվում է նրանով: Եվ մարմինը նույնպես սկսում է կամացուկ «զնգալ», թեթևակի թրթռալ: Ումանք էլ կարող են թույլ ծակծկոցներ զգալ:

Եթե հաջողվի տարրալուծվել Ոգու մեջ, սրտի չակրան անալայման կարճազանքի դրան՝ կընդարձակվի այնքան, որ շունչներդ կկտրվի ձեզ անմնացորդ համակած Սիրուց. . .

Չէ՞ որ հենց այստեղից է գալիս «ոգեշնչված լինել» կամ «ոգեթափ լինել» արտահայտությունը, այսինքն՝ լինել Սիրո կամ ոչ սիրո վիճակում. . .

Եվ հենց սովորեք որսալ ու ձեր մեջ պահել Սիրո էներգիան, առհավետ կլինեք «Ոգեշնչված»:

ՄԱՐՄՆԱՅՅԱԼ ՈԳԻ

Այսօր մենք կշարունակենք խոսել, թե ինչպես կարելի է «ապրել Ոգու մեջ» («Ոգեշնչված»):

Երբ սովորեք տարրալուծվել Ոգու «ձայնի» մեջ և ներքուստ լսել նրան, արդ պիտի անեք հաջորդ քայլը՝ սովորեք դուրս չգալ այդ հոսանքից:

Դա ոչ միայն կօգնի բարձրացնել թրթիռները և մշտապես լինել Սիրո վիճակում, այլև կդառնա ձեր ամենավստահելի պաշտպանությունը, քանզի վերին աստրալի էություններն իսկ արդեն չեն կարողանա թափանցել ձեր էներգետիկական տարածության մեջ:

Դուք «անտեսանելի» կդառնաք նաև շատ մարդկանց համար, որոնք ցածր թրթիռներ ունեն, և դա կօգնի ձեզ առանց ջանք թափելու ազատվել ավելորդ կապերից ու ծանոթություններից: Եվ ամեն ինչ կկատարվի ինքնաբերաբար՝ ամենաբնական ձևով, համաձայն Տիեզերքի «Նմանը ձգում է նմանին» օրենքի:

Եվ այսօր ես կտամ մի պրակտիկա, որը կօգնի ձեզ պահել անհրաժեշտ «բարձունքը» և դուրս չգալ Տիեզերական Անպայման Սիրո օրհնյալ հոսանքից:

Կկոչենք այն **«Մարմնացյալ Ոգի»**:

Այս պրակտիկայի համար հարկավոր է մտնել մեդիտատիվ վիճակի մեջ և կանչել ձեր բոլոր Երկնային օգնականներին:

Այնուհետև, լուծվելով ձեզ շրջապատող Սիրո տարածության նուրբ մեղեդային «զնգոցի» մեջ, պատկերացրեք ինքներդ ձեզ իբրև մի սիլուետ, որը բաղկացած է այդ «զնգոցի» մանրագույն հյուլեններից:

Դուք այլևս չունեք ֆիզիկական մարմին. այն տրոհվել է Անպայման Սիրո այդ մանրիկ մասնիկներին. . .

Եվ մնացել է լույս ձեր սիլուետը՝ երկրային մարմնավորումը ձեր Ոգու, որը շարունակում է ապրել իրեն ոչ հատուկ ցածրաթրթիռ աշխարհում, առնչվելով, սակայն, վերջինիս հետ լույս միջնորդավորված կերպով, միաժամանակ մնալով իր Աստվածային աշխարհում:

Թվում է, թե մաքուր Ոգին իջել է երրորդ խտության աշխարհ, որպեսզի օգնի նրան փոխակերպվել:

Եվ այդպիսի մաքուր Ոգի կարող է դառնալ ձեզնից ամեն ոք:

Իհարկե, դա միանգամից չի հաջողվի: Այդ իսկ պատճառով ես առաջարկում եմ սկսել վարժվել այդ վիճակին մեդիտացիաների ժամանակ, հետզհետե փորձելով պահպանել այն և առօրյա կյանքում:

Դա կարվի փուլերով:

Առաջին փուլ – պահել մաքուր Ոգին քո մեջ մեդիտացիաների ժամանակ:

Երկրորդ փուլ – պահել այն քո մեջ կյանքիդ ամենաերջանիկ պահերին՝ բնության գրկում, սիրելիների հետ շփվելիս, մանուկների և կենդանիների հետ. . .

Երրորդ փուլ – դուրս չգալ այդ վիճակից առօրյա գործերի ժամանակ, խաղաղ իրավիճակում:

Չորրորդ փուլ – մնալ այդ հոսանքի մեջ դրսում՝ անծանոթ մարդկանց հետ կամ աշխատավայրում, ուր ճակատագրի կամքով ամենատարբեր մարդիկ են հավաքվել:

Հինգերորդ փուլ – դուրս չգալ այդ վիճակից, մնալով ինչպես Անպայման Սիրո մի կղզյակ, ամենաբարդ, սովորական մահկանացուի համար սթրեսային իրավիճակներում, այդպիսով վարակելով մյուսներին ձեր հանգստությամբ ու հավատով առ այն, որ ամեն

ինչ կատարվում է ի բարձրագույն բարօրություն բոլորի, որքան էլ ողբերգական երևա երբորդ խտության մարդկանց տեսանկյունից:

Եվ նույնիսկ եթե ձեզ թվա, թե մարդիկ դա չեն ընդունում՝ համարելով ձեզ անհոգի, սառն ու անհասկանալի, նրանց Հոգիները կզգան ձեր վիճակը և շնորհակալ կլինեն ձեր Անպայման Միտք և տեղի ունեցողի Լիակատար Ընդունման համար, որը յուրաքանչյուր Հոգու միակ ճիշտ արձագանքն է իր ստացած երկրային փորձին, ինչքան էլ այն դաժան երևա առաջին հայացքից:

Ի՞ՆՉ Է ՀՈԳԻՆ

Այսօր մենք կանցնենք մեր Եռամիասնության մյուս բաղադրիչին և **կխոսենք Հոգու մասին**: Ի՞նչ է Հոգին: Եվ ի՞նչ տեղ է գրավում մարդու կյանքում:

Պատկերավոր ձևով այն կարելի է կոչել Ոգուց պոկված՝ գիտակցության անհատական մասնիկ:

Հոգին նույնպես Աստվածային սուբստանց է, բայց նրանում խտացած է անհատական որակների մի համակազմ, որն էլ պայմանավորում է անձը՝ բացառիկ և անկրկնելի:

Բովանդակ Տիեզերքում չես գտնի երկու միանման Հոգի:

8

Յուրաքանչյուր Հոգու մեջ ներդրված է որոշակի Աստվածային «կող», որը միևնույն ժամանակ նրա կուտակած բոլոր իմացությունների ու փորձի պահապանն է:

Մարդկային հոգիների ծննդյան պրոցեսը մի քիչ բարդ է ձեր ըմբռնման համար, բայց հիմքում Սկզբնարարչի ձգտումն է՝ դրսևորվել իր բյուրավոր մասնիկների մեջ մշտնջենական ճանաչողության և ստեղծարարման համար:

Ամեն Հոգի իր ծագումն ունի, իր պատմությունը, տարիքը, աշխարհագրությունը: Հոգիները ծնվում են տարբեր ժամանակներում տարբեր գալակտիկաներում և տարբեր մոլորակների վրա: Կան շատ հին ու հասուն հոգիներ, կան և բոլորովին ջահելներ:

Եվ որպեսզի խոր ու արգասավոր լինեն ամեն հոգու իմացություններն ու փորձը, բոլոր հոգիները շարունակ «միախառնվում են»՝ միմյանց հարստացնելու, իսկ ընդհանուր առմամբ խնդիրները բարդացնելու նպատակով, քանի որ սոսկ իրեն լիովին հակադիր զգացմունքների, հույզերի, հայացքների փոխազդեցությամբ նա կարող է սովորել իմաստություն, տոկունություն, համբերատարություն և Անպայման Մեր:

Երկիր մոլորակը իդեալական հարթակ է Հոգու ինքնաճանաչման և կայացման համար, որովհետև այստեղ տիրում է զարմանալի բազմազանություն՝ բնական, ռասայական, սոցիալական, քաղաքական, կրոնական . . .

Եվ այստեղ եկող Հոգիները՝ ֆիզիկական մարմնով հանդեմավորված, ինքնակատարելագործման երկար ուղի են անցնում, ծնունդից ծնունդ ավելի ու ավելի վեր բարձրանալով հոգևոր սանդուղքով, որն ի վերջո կարող է նրանց դուրս բերել վերամարմնավորումների շրջապտույտից՝ հնարավորություն տալով շարունակելու իրենց փորձառությունը արդեն կեցության վերին ոլորտներում՝ այլևս չծնվելով ֆիզիկական մարմինների մեջ:

Սակայն երրորդ խտության աշխարհում, որտեղ ապրում եք հիմա դուք, Հոգու խնդիրը բարդանում է նաև նրանով, որ մարդու հիշողությունից լրիվ ջնջվում է Հոգու կեցությունը մարմնավորումների միջև, և նրան թվում է, թե ինքը նոր-նոր է սկսում իր կյանքը:

Իսկ իրականում ամեն նոր մարմնավորման հետ Հոգին իր զարգացման նոր շրջափուլն է մտնում, ամրապնդելով անցած նյութը կամ ուսումնասիրելով նորը: Այդ «մոռացվածությունը» հաճախ հանգեցնում է նրան, որ Հոգին սկսում է շրջանաձև մի երթ, նորից ու նորից կրկնելով միևնույն սխալները և այդպիսով ապարդյուն ապրելով կյանքը:

Որպես կանոն, դա կատարվում դեռ շատ երիտասարդ հոգիների հետ, որոնց դուր են եկել եռաչափ խաղերը և որոնց գիտակցությունը դեռ պատրաստ չէ որևէ նոր ու անհայտ բան ընդունելու:

Հոգու զարգացումն արագացնելու համար ստեղծվել է նրա բազմաստիճան կառուցվածքը՝ որպես մի տեսակ ապահովագրություն ու երաշխիք, որ Հոգին, սուզվելով երկվության աշխարհի ցածր թրթիռների մեջ, չի կործանվի ու չի կորչի ընդմիջս:

Եվ հաջորդ ուղերձում ես ավելի մանրամասն կպատմեմ այդ մասին:

ՀՈԳՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Եվ այսպես, ի լրումն իմ նախորդ ուղերձի, մենք այսօր կխոսենք Հոգու կառուցվածքի մասին:

Քանի որ շատ դժվար է բացատրել նրա ծննդյան պրոցեսը՝ օգտագործելով եռաչափ աշխարհի հասկացությունները, ես կասեմ լուրջ այն, ինչ այժմ գործնական նշանակություն ունի ձեզ համար և կօգնի հաղթահարել անջրպետը, որը զատում է ձեզ՝ մի չափումից մյուսը կատարելիք Անցումից (Переход):

Որպեսզի ծնված Հոգին չկորչի Տիեզերքի անափ օվկիանոսում, նրան տրվում է «կող»՝ յուրատեսակ Աստվածային «տարբերանիշ»: Դա հենց այն «կայծն» է, որից հետո բոցավառվում է Հոգու «հուրը»: Հոգիների ծննդյան պրոցեսը կարելի է համեմատել Աստվածային ցանքի հետ, երբ Տիեզերքի Արարիչը սփռում է հոգի-«սերմերն» իր ամբողջ կալվածքով մեկ, և նրանք հայտնվում են այնտեղ, ուր ընկնում են ճակատագրի կամքով:

Եվ արդեն այս կամ այն մոլորակի «հողում» էլ սկսում են «ծլարձակել»:

Եվ եթե հավերժ ու անմահ է Ոգին, քանզի նա է կյանքի նախահիմքը Տիեզերքում, ապա նրա Հոգի-մասնիկներն ունեն ժամանակային սահմաններ՝ ծնունդ, ապա վերածնունդ իբրև Արարիչներ, որոնք սկսում են ստեղծել իրենց սեփական Տիեզերքները:

Եթե վերցնենք երրորդ չափման ժամանակային սահմանները, այդ պրոցեսը տևում է միլիոնավոր և միլիարդավոր տարիներ: Իսկ մյուս չափումների շրջանակում, ուր գոյություն չունի տարածություն և ժամանակ, այդ փուլայնությունը բոլորովին այլ պարամետրեր ունի:

Իսկ հիմա խոսենք այն Հոգիների մասին, որոնք այժմ բնակվում են Երկրի վրա, և մանրամասն քննենք նրանց կառուցվածքը: Մարդու Հոգին բազմաչափ է, որովհետև նրա բաղադրիչները տարբեր չափումներում են գտնվում, բայց հիմքը՝ հոգեմիջուկը, անփոփոխ է:

Դա հենց այն «կողմ» է՝ Հոգու «ոսկե ֆոնդը», որը փշուր առ փշուր իր մեջ է ամփոփել հարյուրավոր և հազարավոր իր մարմնավորումների անգին փորձը:

Շատ վաղեմի ու հասուն Հոգիներ, որոնք բարձրացել են վեցերորդ, յոթերորդ կամ ութերորդ չափում, հաճախ Մայրական Հոգիներ են դառնում Երկրի վրա ապրող բազմաթիվ այլ հոգիների համար:

Ի՞նչ է դա նշանակում:

Նրանք արդեն ունակ են տրոհվելու շատ գիտակցությունների, որոնք մարմնավորվում են իրենց զավակ-հոգիների մեջ, որոնք բնակվում են ավելի ցածր չափումներում: Եվ որքան հին է Հոգին, այնքան խորն է «ձգում նա իր արմատները» Տիեզերքում, երբեմն ընդգրկելով մեկից ավելի զավակտիկաներ:

Նրա «զավակները» կարող են ծնվել տարբեր մոլորակների վրա, տարբեր չափումներում, զուգահեռ քաղաքակրթություններում և այդուհանդերձ ունենալ մեկ ընդհանուր Մայրական Հոգի, որը մշտապես կապված է նրանց հետ:

Ինչու՞ է այդպես լինում:

Նախ և առաջ որովհետև Մայրական Հոգին արդեն ծնվել է բոլոր այդ աշխարհներում և, անցնելով կրակը, ջուրն ու պղնձե փողերը, հրաշալի գիտի, թե ինչ է սպասում դրանց բնակիչներին: Եվ մեծ ցանկություն ունի օգնելու նրանց, քանի որ իր հասած բարձունքում նա ինքը Մերն է՝ Անպայման և Համապարփակ:

Նա կարող էր էլ ավելի վեր ելնել և արարել իր Տիեզերքները, սակայն ընտրել է այլ առաքելություն՝ մնալ իբրև ստորին աշխարհներում մարմնավորումների շարան անցնող հոգիների հովանավոր, կապող օղակ դառնալ այդ հոգիների և Տիեզերքի Բարձրագույն Ուժերի միջև՝ թույլ չտալով նրանց մոռանալ իրենց Աստվածային ծագման մասին:

ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈԳԻ

Շարունակենք մեր գրույցը Հոգու կառուցվածքի մասին:

Ձգտելով առավելագույնս հարստանալ և փորձել ֆիզիկական թաղանթով գոյության բոլոր հնարավոր տարբերակները, Հոգին բազմապատկվում է երկրաչափական 12-ապատիկ պրոգրեսիայով:

Եվ նման հսկայածավալ տեղեկատվությունից գլուխ հանել նրան օգնում է Մայրական Հոգին, որը մշակում ու համադրում է իր ամեն մի մասնիկի կուտակած ողջ փորձը:

Այժմ Երկրի երեսին ապրող գրեթե յուրաքանչյուր մարդ մասնիկ է Մայրական Հոգու, որն առաջնորդում ու պահպանում է նրան այս պատասխանատու ժամանակաշրջանում:

Մայրական Հոգին չափազանց բարդ կառուցվածք ունի, որովհետև նրա հարյուրավոր, երբեմն էլ հազարավոր մասնիկները սփռված են ձեր մոլորակով մեկ՝ տարբեր մայրցամաքներում, տարբեր երկրներում, քաղաքներում, սոցիալական շերտերում ու կրոնական համայնքներում:

Այդ կերպ նա ապահովագրվում է իր զարգացման անկումից. չէ՞ որ ոչ բոլոր «սերմերը» կարող են ծլարձակել եռաչափ աշխարհի «անջրդի հողում»... Եվ դա առանձնապես արդիական է դառնում հիմա, քանի որ Երկիր են իջել այստեղ երբևէ ապրած Մեծագույն Հոգիների բազում մասնիկներ:

Մայրական Հոգին ամեն ինչ անում է, որ նրանք արթնանան և հիշեն իրենց առաքելությունը, որն իրենք են ընտրել ծնվելուց առաջ: Մայրական Հոգու յուրաքանչյուր մասնիկ ունի իր սեփական գիտակցությունը, ուստի և՛ ազատ կամք:

Նրա մեջ ներդրված է իր բոլոր կյանքերի, հատկապես ողջ մարդկության համար մեծ ու նշանակալից մարմնավորումների գենետիկական հիշողությունը, բայց հիշել դա, գտնվելով Երկրի վրա՝ ֆիզիկական մարմնում, լոկ եզակի մարդկանց է հաջողվում:

Երբեմն նրանց օգնում է զուգորդական հիշողությունը: Նկարի կամ սրբապատկերի ինչ-որ մանրամաս, պատմական գրականությունից քաղած տեղեկություն կամ Երկրի տեղանք, ուր հայտնվում են «պատահականության» բերումով, փայլատակումներ են առաջացնում նրանց գիտակցության մեջ՝ նպաստելով խորքային հիշողության արթնացմանը, երբեմն էլ ծնունդ տալով տեսիլքների, որոնք տանում են իրենց դեպի նախորդ կյանքերը:

Իր կապը Մայրական Հոգու հետ ամեն մարդ տարբեր կերպ է զգում: Մեկը նրա ներկայությունը զգում է մեղիտացիայի ժամանակ կամ պարզապես խաղաղ ու ներդաշնակ վիճակում, մյուսն, ընդհակառակը, իր կյանքի ամենաողբերգական պահերին:

Ամեն պարագայում, դուք այն զգում եք որպես Աստվածային ներկայություն, որը երանությամբ է համակում ձեր Հոգին կամ կոչված է սատարելու ձանր պահերին՝ պաշտպանելով ձեզ վտանգից:

Գտնվելով շատ բարձր չափումներում, նա իսկապես ունակ է Տիեզերքի Բարձրագույն Ուժերի նման պարուրելու ձեզ իր Լույսով ու Սիրով, բաշխելով իր մայրական ջերմությունը:

Սակայն նա ուրիշ խնդիր էլ ունի՝ ուղղորդել ձեր կյանքն այնպես, որ ընթանաք հենց այն ճանապարհով, որը ձեր Հոգին է ընտրել իր ծննդից առաջ, որպեսզի եռաչափ աշխարհը, ուր սուզվել եք դուք, ձեր նպատակից չհեռացնի ձեզ:

Իսկ Երկիր եկած յուրաքանչյուր Հոգու գերագույն նպատակն էլ հենց այն է, որ դուրս պրծնի եռաչափության խորթ միջավայրից և գտնի իր կորսված Աստվածայնությունը:

Սակայն դա հնարավոր կլինի լուրջ այն ժամանակ, երբ հոգևոր սկզբունքը գերակայի նյութական կողմին, որն այժմյան հասարակությունը ծննդյան պահից արմատավորում է մարդու մեջ:

Եվ հաջորդ իմ ուղերձներում ես կպատմեմ, թե ինչ «մեթոդներով է աշխատում» Մայրական Հոգին Երկրի վրա ֆիզիկական մարմիններում ապրող իր զավակների հետ:

ՀՈԳՈՒ ՏՐՈՂՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆ ՈՒ ԻՄԱՍՏԸ

Շարունակենք մեր զրույցը Հոգու կառուցվածքի մասին, և ես կբացատրեմ նրա՝
բազմաթիվ մասնիկների տրոհվելու սկզբունքն ու իմաստը:

Անտարակույս, նման տրոհման գլխավոր նպատակը առավել ցածր չափումներում անգին կենսափորձ ձեռք բերելու Հոգու ձգտումն է, որը հնարավորություն կտա իրեն անցնելու բացառիկ էվոլյուցիայի ուղի, և ամենից առաջ՝ հոգևոր:

Յուրաքանչյուր Հոգի ամբողջի մի մասնիկն է իր «միկրոտիեզերքում», որպիսին հանդիսանում է Միասնական Մայրական Հոգու ճյուղավորված համակարգը:

Սակայն ֆիզիկական պլանում միևնույն Հոգու մասնիկները ցրված են մոլորակով մեկ, և շատ քչերին է հաջողվում հանդիպել իրար:

Ինչպես արդեն գիտեք, ամեն Հոգի ունի արական և իգական սկիզբ՝ մեկ ամբողջության երկու կես: Եվ այն հանգամանքը, որ ծննդի պահին նրանք «երկփեղկվում» են, դարձյալ էվոլյուցիայի ծրագրի «կետերից» է, որի պայմանները բազմապատիկ բարդանում են այդ կերպ: Ով կհաջողի գտնել իր երկրորդ կեսին՝ լինելով ֆիզիկական մարմնում, իր հոգևոր զարգացման մեջ հսկայական «պարզ» կստանա: Եվ ահա թե ինչու:

Որպես կանոն, միևնույն հոգու կեսերը՝ այսպես կոչված «երկվորյակ բոցերը», ոչ միայն Հոգու ֆիզիկական մարմին առած արական և իգական սկիզբն են, այլև անձնային որակների առումով մեկը մյուսի կատարյալ հակադրությունը՝ կոչված ամեն ինչում լրացնելու միմյանց:

Թեև նրանց բարձրագույն ասպեկտները ավելի վերին չափումներում միանգամայն ներդաշնակ են իրար հետ, եռաչափ աշխարհում մարմնավորված նրանց մասնիկները ձեռք են բերում երկվության աշխարհի մարդկանց բնորոշ հատկություններ:

Այդ պատճառով էլ, հանդիպելով Երկրի վրա, չնայած երկուստեք սաստիկ ձգողության (հարազատ հոգուն ճանաչելուն), նրանք երբեմն խստագույն փորձություններով են անցնում՝ հղկվելով բնավորությամբ, սովորություններով, կյանքային հայացքներով:

Լինելով միմյանց հայելային արտացոլանքը, նրանք տեսնում են իրենց բոլոր թերություններն ու թուլությունները և դրա շնորհիվ փայլեցնելու աստիճան հղկում իրենց Հոգու բոլոր նիստերը, ինչը հնարավորություն է տալիս հսկայական թռիչք կատարել իրենց հոգևոր զարգացման մեջ:

Եթե երկվորյակ բոցերը բավական հազվադեպ են հանդիպում իրար Երկրի վրա, և առավելապես այն դեպքերում, երբ Հոգին ելնում է Ծառայության, ապա միևնույն Հոգու տարբեր մասնիկները շատ ավելի հաճախ են ձգում միմյանց:

Դրանք երկվորյակ հոգիներն են, որոնց դուք սովորաբար հարազատ հոգիներ եք անվանում: Նրանց հարաբերությունները, որպես կանոն, ավելի ներդաշնակ են, որովհետև գերակշռում են համանման անձնային որակները:

Այդպիսի մարդիկ դառնում են ընկերներ, ամուսիններ, համախոհներ, քանի որ միատեսակ աշխարհայացք, ճաշակ ու հետաքրքրություններ ունեն:

Ներկայումս, երբ Երկիրն ապրում է անսովոր ժամանաշրջան՝ Անցում մի չափումից այլ չափում, բազմաթիվ վսեմ հոգիների մասնիկներ միաժամանակ մարմնավորվել են Երկրի վրա, որպես առաքելություն ընտրելով օգնությունը համայն մարդկությանը իր համար դժվարին այս ժամանակներում:

Նրանցից ոմանց մոտ բացվում են Տիեզերքի Բարձրագույն Ուժերից տեղեկատվություն ընդունելու հեռագրացական կապուղիներ, բացվում են նաև իրենց նախկին մեծ մարմնավորումների անունները, ինչն օգնում է նրանց առավել պատասխանատվությամբ վերաբերվելու մարդկության բարօրությանը նվիրված իրենց գործունեությանը:

« ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ » ՄԱՅՐԱԿԱՆ ՀՈԳՈՒ ՀԵՏ

Եվ այսպես, շարունակենք մեր գրույցը, թե ինչպես կարող է Մայրական Հոգին գործակցել ֆիզիկական մարմիններում կենող իր մասնիկների հետ:

Իհարկե, նման շփումը կարող է միայն նուրբ պլանում լինել, այսինքն՝ ձեր նուրբ մարմինների մակարդակում, հիմնականում բուդիիական և ատմիկական: Բայց երբեմն նրան հաջողվում է «հասնել» մարդու նույնիսկ մենտալ և աստրալ մարմիններին:

Եվ ահա թե ինչպես է դա տեղի ունենում:

Երբ զգացմունքները՝ թե՛ դրական, թե՛ բացասական, հասնում են իրենց գագաթնակետին, տեղի է ունենում հսկայական էներգետիկական ճողփյուն, որն ի գորու է «ալեկոծելու» մարդու բովանդակ էությունը, այդ կերպ ակտիվացնելով նրա կապուղին նուրբ աշխարհի հետ:

Հենց դա է պատճառը, որ կյանքի կրիտիկական պահերին օգնության ձեր աղոթքները որպես կանոն լսելի են դառնում Տիեզերքի Բարձրագույն Ուժերին և առավել ևս՝ ձեր Մայրական Հոգուն:

Եվ եթե նա տեսնում է, որ իր միջամտությունն օգուտ կբերի ձեզ, անպայման «շտկում» է իրավիճակն այնպես, որ ձեր Հոգին իրեն անհրաժեշտ փորձը քաղի նվազագույն հոգեկան կորուստներով:

Սակայն երբեմն նա ստիպված է լինում դաժանություն հանդես բերել: Դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ նա տեսնում է, որ դուք այնպես եք կուլ գնացել եռաչափ աշխարհին, որ դարձի բերել ձեզ կարող են լոկ բարոյական կամ նյութական բնույթի ծանր փորձությունները:

Շատ կարևոր է, սիրելիներս, որ ձեր կյանքի բոլոր իրադարձությունները դուք ընդունեք Աստվածային նպատակահարմարության տեսակետից, որը ձեր Հոգու զլխավոր «կողմնորոշիչն» է:

Հիմնական դժվարությունն այն է, որ ձեր Հոգու նպատակներն ու ցանկությունները հաճախ խիստ տարբերվում են երկվոյան աշխարհի մարդու ցանկություններից, որը հայտնվում է իր Էգոյի, եռաչափ աշխարհի կյանքային դիրքորոշումների ու սկզբունքների «ճնշման» տակ, որտեղ մեծամասնության համար գերակայողը ամենևին էլ հոգևոր արժեքները չեն:

Բայց ինչ էլ կատարվի ձեր կյանքում, ձեր ամեն միտքը, զգացմունքն ու արարքը «դարավում» է ձեր Հոգու գանձատուփում, ներմուծվում է ձեր Աստվածային «կողի» տվյալների շտեմարանում:

Ինչպես որ համակարգչի «կոշտ սկավառակը», որը տվյալ դեպքում ձեր Հոգու միջուկն է կամ Մայրական Հոգին, ամփոփում է իր մեջ ձեր ապրած բոլոր կյանքերի բազմաթիվ «թղթապանակները», որոնցից ամեն մեկն իր հերթին պարունակում է անհամար «փաստաթղթեր» կյանքի յուրաքանչյուր դրվագի վերաբերյալ:

Եվ քանի դեռ մարմնավորման մեջ եք, ձեր Մայրական Հոգին կարող է ուղղումներ մուծել ձեր ներկա կյանքի դրվագների մեջ, քանզի նրան միշտ հասանելի են ձեր «թղթապանակներն» ու «փաստաթղթերը»:

Ֆիզիկական պլանում նման «ուղղումները» դրսևորվում են որպես ճակատագրի կտրուկ փոփոխություններ՝ աշխատանքի, բնակության վայրի փոփոխություն, նոր մարդկանց ասպարեզ գալ, որոնք ունակ են դրականորեն ներգործելու ձեր և ձեր աշխարհայացքի վրա, օգնելու բռնել հոգևոր զարգացման ուղին:

Իսկ երբեմն էլ նա ստիպված է լինում դիմել իր մասնիկների «դաստիարակման»

ծայրահեղ միջոցներին, ինչպես՝ բաժանումը սիրելիներից կամ մերձավորների կորուստը:

Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ մարդը չի լսում ու չի տեսնում այն բազմաթիվ նշաններն ու հուշումները, որոնք նրան են ուղարկվում կյանքի ընթացքում, կամ էլ անտեսում է դրանք՝ ելնելով իր հզորի կամ այլոց շահերից, ենթարկվելով ուրիշի կամքին:

Հետևաբար, խնդրում եմ ձեզ, զավակներս, դիտարկե՛ք ձեր կյանքի բոլոր իրադարձությունները՝ թե՛ ուրախ, թե՛ տխուր, սեփական Աստվածային նախասահմանումն իմացող մարդու դիրքից և փորձե՛ք տեսնել դրանց խորքային պատճառները, այլ ոչ թե նրանք, որ մակերեսին են:

Եվ ես օրհնում եմ ձեզ դրա համար. . .

Ձեզ անսահման սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

ՄԻԵՎՆՈՒՅՆ ՀՈԳՈՒ ԵՐԿՈՒ ԿԵՍԵՐԸ

Այսօր ես ուզում եմ ձեզ պատմել, թե ինչ եղանակով է Մայրական Հոգին համաձայնեցնում իր մասնիկների կապը:

Ճյուղավորված այս կառուցվածքի փոխազդեցության մեխանիզմն անչափ բարդ է, նրա հիմքում պատճառա-հետևանքային կապն է: Դա տեղի է ունենում հետևյալ կերպ:

Որպես օրինակ վերցնենք հնագույն հոգիներից մեկին, որի մարմնավորումներն անջնջելի հետք են թողել Երկրի վրա, որոնցից մեկն էլ Եշուան էր, նա, ում դուք անվանում եք Հիսուս Քրիստոս: Ինչու՞ եմ ես վերցնում հենց այդ օրինակը:

Բանն այն է, որ այդ Հոգին հիմա էլ Երկրի վրա է, ընդ որում՝ իր հարյուրավոր մասնիկներով: Նա եկել է, որպեսզի ավարտին հասցնի ավելի քան երկու հազարամյակ առաջ սկսած իր առաքելությունը: Բայց այս անգամ նա պետք է օգնի համբարձվել ոչ միայն մարդկանց, այլև ողջ մոլորակին:

Հասկանալի է, որ այդպիսի խնդիրն արդեն Տիեզերական մասշտաբ ունի և նրա իրականացումը վեր կլինեք մեկ մարդու ուժերից:

Ավելին, նման մեծագույն առաքելության բարեհաջող իրագործումը հնարավոր կլինի լոկ մի պայմանով, եթե այդ Հոգու մասնիկները գտնեն իրենց Միասնությունը, այսինքն՝ Երկրի վրա հանդիպեն և վերամիավորվեն միևնույն Հոգու արական և իգական կեսերը, ինչպես ժամանակին եղել է Եշուայի և Մարիամ Մազթաղինացու հետ:

Մինչդեռ Երկրի վրա ապրելու պայմաններն առ այսօր նույնն են. ծնվելով ֆիզիկական մարմինների մեջ եռաչափ աշխարհում, հոգիները մոռանում են իրենց առաքելությունը, որ պլանավորել էին նախքան ծնունդը:

Եվ այդ ժամանակ խաղի մեջ է մտնում Մայրական Հոգին, որի խնդիրն անասելի բարոյ է՝ օգնել, որ իրար հանդիպեն երկու կեսերը՝ երկվորյակ բոցերը, որոնք անցյալում արդեն մարմնավորված են եղել միասին մարդկությանը ծառայելու համար: Իսկ այդ կեսերը կարող են միմյանցից շատ հեռու լինել: Եվ նրանց բաժանողը կարող է ոչ միայն տարածությունը լինել, այլև սոցիալական, տարիքային, երբեմն էլ լեզվական անջրպետը:

Եվ որպեսզի հանդիպումը կայանա, ութերորդ չափման մեջ կենող Մայրական Հոգին ստիպված է լինում դիմել Տիեզերքի Բարձրագույն Ուժերի՝ Համբարձյալ Վարպետների, Հրեշտակների և Հրեշտակապետների, երբեմն նույնիսկ գուգահեռ քաղաքակրթությունների, օրինակ՝ Ագարտայի, օգնությանը:

Միասնական ջանքերի շնորհիվ գույգ կեսերի կյանքի սցենարը արմատապես փոխվում է:

Նրանք սկսում են վարվել իրենց ոչ բնորոշ կերպով. նրանց թվում է, թե ինչ-որ մեկը տանում է իրենց՝ ուղղորդելով բոլորովին այլ ճանապարհով:

Իրականում հենց այդպես էլ լինում է: Ամեն օր, ամեն ժամ, ամեն բոլոր նրանք գտնվում են Բարձրագույն Ուժերի անքթիթ հսկողության ներքո, որոնք բաց չեն թողնում ոչ մի հնարավորություն նրանց միավորելու համար:

Բայց նույնիսկ եթե Լուսավոր Ուժերի ջանքերը հաջողությամբ են պսակվում և ֆիզիկական պլանում միևնույն Հոգու երկու կեսերն ի վերջո հանդիպում են, ոչ բոլորին է հաջողվում ճանաչել իրար և առավել ևս՝ վերամիավորվել կեցության բոլոր պլաններում, որը նրանց երկրային առաքելության բարեհաջող իրագործման գրավականն է:

Ինչպես արդեն ասել եմ իմ նախորդ ուղերձներից մեկում, երկվորյակ բոցերի հանդիպումը գրեթե միշտ ցավագին է լինում, և այդ վսեմագույն Հոգու ոչ բոլոր մասնիկներն են ի վիճակի հաղթահարելու դժվարություններն ու տարածայնությունները, որոնք անխուսափելիորեն ծագում են նրանց ճանապարհին:

Բայց եթե դա հաջողվում է, նրանք դառնում են հիրավի Միասնական Հոգի և, ամեն ինչում իրար լրացնելով, լիարժեք Ծառայության են ելնում հանուն մարդկության:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ

Եվ այսպես, շարունակենք մեր գրույցը, թե ինչպես է Մայրական Հոգին փորձում օգնել ֆիզիկական մարմիններում կենող իր զավակներին՝ առավելագույնս բացահայտելու իրենց մեջ ներդրված կարողությունները:

Հավանաբար ձեզնից ոմանք նկատել են, որ ինչ-որ պահերի կյանքն անիրական է թվացել. դուք ամեն ինչի նայել էք կողմնակի դիտորդի հայացքով, զարմանքով հետևելով ձեր շուրջը ծավալվող իրադարձություններին և ինքներդ ձեզ էլ կարծես կողքից հայելով:

Այդ կողմնակի դիտորդը իրականում ձեր Բարձրագույն Եսն է՝ ձեր Հոգին, որը «դուրս է գալիս» ֆիզիկական թաղանթի «պատյանից» և փորձում է ասել ձեզ .

«Նայի՛ր այս աշխարհին, զգա՛, որ այն սուկ դեկորացիա է մի ներկայացման, որում դու խաղում ես դերերից մեկը: Մի՛ վերաբերվիր նրան չափազանց լուրջ: Սովորի՛ր ապրել այս «թատերական» աշխարհում ուրախ, թեթև ու երջանիկ: Այստեղ ամեն ինչ կախված է միմիայն քեզնից: Ամեն օր, ամեն ժամ և ամեն բոլոր դու կարող ես փոփոխել կյանքիդ սցենարը: Միայն պիտի հավատաս, որ դու՛ ես քո իրականության Ամենակարող Արարիչը»:

Բայց ձեզնից քանի՞սն են ունակ լսելու իրենց Հոգուն և հետևելու նրա խորհրդին:

Ցավոք՝ շատ քչերը, այդ պատճառով էլ օգնության է գալիս Մայրական Հոգին, որն իրեն մատչելի բոլոր միջոցներով փորձում է այդ ճշմարտությունը հասցնել ձեզ և, հարկ եղած դեպքում, փոփոխում է ձեր կյանքի սցենարը, որպեսզի կարողանաք կատարել ձեր նախասահմանումը՝ լիովին իրագործելով ձեր բոլոր տաղանդներն ու ունակությունները:

Ինչպե՞ս է դա դրսևորվում գործնականում:

Ենթադրենք՝ դուք տարիներ շարունակ տքնում եք ձեր չսիրած տաղտկալի աշխատանքի տակ, որը սակայն լավ եկամուտ է բերում՝ հնարավորություն տալով ապրել ուրիշներից ոչ վատ: Դուք մտնում եք երրորդ չափման Երկրի հաջողակ կյանքի ստանդարտների մեջ, բայց Հոգին ձեր լալիս է տրտմությունից ու անելանելիությունից, քանզի ամեննին էլ դրա համար չի եկել նա Երկիր՝ նոր չափման մեջ Անցում կատարելու այս զարմանալի ժամանակաշրջանում:

Ձեր Պահապան-Հրեշտակներն ուժասպառ են եղել՝ ջանալով պոկել ձեզ այդ խորթ միջավայրից, «կազմակերպելով» հանդիպումներ նոր մարդկանց հետ, աչքի առաջ «դնելով» պետք եղած հողվածները, հայտարարություններն ու հեռուստատեսային հաղորդումները:

Սակայն դուք առաջվա նման կույր եք: Չափազանց մեծ է իներցիայի ուժը: Դուք գերի եք դարձել ձեր սովորություններին ու շրջապատին: Եվ այդ ժամանակ բեմ է ելնում Մայրական Հոգին, որը որոշում է փրկել իր սիրասուն զավակին՝ ձեր Հոգուն, և ամեն գնով դուրս բերել նրան այդ օտարոտի շրջապատից:

Արդյունքում՝ ձեր կյանքի սցենարը կտրուկ փոխվում է . դուք կորցնում եք աշխատանքը, դուրս եք գալիս ձեր սովորական հարամարավետության գոտուց, ստիպված եք լինում հապշտապ կերպով նոր լուծումներ գտնել, սրվում են հարաբերությունները մերձավորների հետ . . .

Այլ կերպ ասած՝ ձեզ «թափ են տալիս», հանում են նինջից, որին տրվել էք՝ եռաչափ աշխարհի մեջ ընկղմվելով, և ձեզ այլ բան չի մնում, քան ամեն ինչի նայել նորովի, այլ հայացքով, և ելք փնտրել ստեղծված իրավիճակից՝ մոբիլիզացնելով ձեր բոլոր ներքին կարողությունները:

Եվ եթե ձեր մտքերը սկսում են վերջապես ճիշտ ուղղությամբ գործել, ձեզ սատար են կանգնում բոլոր Բարձրագույն Ուժերը՝ օգնելով գտնել այն, ինչ հարկավոր է ձեր Հոգուն, այլ ոչ թե ձեզ՝ որպես երկվորյան աշխարհի մարդու:

ՀՈԳՈՒ «ԾԱՌԸ»

Այսօր մենք կխոսենք, թե ինչպես են կապակցվում միևնույն Հոգու տարբեր ճյուղերը:

Նման փոխազդեցության սկզբունքն ավելի լավ հասկանալու համար պատկերացրեք հզոր, գեղեցիկ մի ծառ, որի բունը Մայրական Հոգին է, նրա տասներկու ճյուղերը իր տարբաժանումն է Աստվածային Եսերի, ավելի փոքր ճյուղերը Բարձրագույն Եսերն են, իսկ տերևները՝ այն հոգիները, որոնք ներկայումս կենում են ֆիզիկական մարմիններում:

Մա, իհարկե, պարզեցված սխեմա է, որը տրվում է ակներևության համար: Մակայն շատ կարևոր է, որ դուք հասկանաք՝ յուրաքանչյուր «տերև»-հոգի կյանք ու սնունդ է ստանում «ճյուղից», որին աճում է, իսկ «ճյուղն» իր ուժը քաղում է Մայրական Հոգի-«բնից»:

Ինչո՞վ է պայմանավորված Երկրի վրա մարմնավորված հոգիների և Մայրական Հոգու փոխգործակցության սխեմայի այդչափ բարդությունը:

Այն անհրաժեշտ է, որ պահպանվի «սերունդների հաջորդականությունը», այսինքն՝ որ նախորդ մարմնավորումների ժամանակ կուտակված փորձը ապարդյուն չկորչի և թեկուզ խորքային՝ ենթագիտակցական մակարդակում օգնի ֆիզիկական մարմնում կենող Հոգուն առաջ շարժվել:

Որպես կանոն, մարմնավորման գնացող տասներկու մասնիկներն իրենց համար ընտրում են շատ տարբեր ծննդավայրեր ու կենսապայմաններ, որպեսզի ընդհանուր գանձատուփի մեջ որքան հնարավոր է բազմազան փորձ հավաքեն:

Նամանավանդ հիմա դա ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, որովհետև բազմաթիվ հոգիներ վերջին անգամ եկել են Երկիր՝ Անցումը կատարելու նպատակով:

Նրանք ընտրել են բացառիկ մի փորձառություն, որով ոչ ոք գործնականորեն դեռ չի անցել: Եվ նրանց համար հիմա չափազանց կարևոր է հավաքել-լրացնել այն ամենը, ինչ չի հաջողվել ձեռք բերել նախորդ կյանքերում, խաղալ դերեր, որոնք դեռ բաժին չեն ընկել իրենց:

Հետևաբար, զավակնե՛րս, եթե ձեզ թվում է, թե ճակատագիրն այժմ չափից ավելի փորձություններ է ուղարկում ձեզ, ԾՆՈՐՀԱԿԱՆՆԵՐԷՔ դեռ համար, որովհետև հենց նրանցով է կատարվում ձեր Հոգուն այնքան անհրաժեշտ երկրային փորձի ուժգին ու արագ «լրամշակումը», որը թույլ կտա նրան ելնել զարգացման արդեն բոլորովին այլ մակարդակ և բարձրանալ վեր՝ թոթափելով եռաչափության բեռը:

Բայց դա կլինի միայն այն դեպքում, եթե պատվով անցնեք այդ փորձությունները. եթե դրանք չխստացնեն, չչարացնեն ձեզ, այլ, ընդհակառակը, սովորեցնեն իմաստություն ու Անպայման Սեր, ձեր կյանքում կատարվող բոլոր իրադարձությունների և ձեր ճանապարհին հանդիպող բոլոր մարդկանց լիակատար ընդունում, եթե դուք սովորեք երախտագիտությամբ ընդունել ձեր ճակատագրի «դեկորացիայի ամեն փոփոխություն» և որսալ այն նշանները, որոնք ուղարկվում են ձեզ ի վերուստ. . .

Ավարտին է մոտենում բազմաթիվ արարներով պիեսի եզրափակիչ դրվագը շատ ու շատ մարդկանց համար, որոնց Հոգիներն արդել աճել-անցել են եռաչափ աշխարհը՝ խաղալով իրենց բոլոր դերերը, և հիմա պատրաստ են ընդմիջտ լքել այն:

Եվ առավել քան երբեք ձեր Հոգու «ծառը» հիմա լեցուն է կենարար հյութերով: Օր ու գիշեր նա պարարում է իր «ճյուղերն» ու «տերևները» Սիրո Աստվածային էներգիայով, որն օգնում է նրանց հաղթահարել նոր կյանքի ճանապարհին եղած վերջին խոչընդոտը:

Դրա համար, խնդրում եմ ձեզ, զավակներս, որքան կարելի է հաճախ դիմեք ձեր Բարձրագույն և Աստվածային Եսերին, ինչպես նաև ձեր Մայրական Հոգուն՝ խորհրդի և օգնության համար:

Ուշի ուշով հետևեք, թե ինչ է կատարվում ձեր կյանքում: Ուշադրություն դարձրեք ամեն մանրուքի, ամեն նշանի, որ ուղարկում է ձեզ ճակատագիրը: Շնորհակալ եղեք ամեն ինչի համար, որ ունեք, նույնիսկ՝ չնչին բաների:

Եվ մի՛շտ հիշեք, որ Սերն ու Շնորհակալությունն է հենց այն Աստվածային հիպոստատ, որն ապրում է ամեն մարդու ներսում, բայց որը բացահայտել իր մեջ ոչ բոլորին է տրված:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՄ

Իսկ հիմա, երբ դուք արդեն գիտեք, թե որքան բարդ ու բազմաչափ է յուրաքանչյուր Հոգու կառուցվածքը, ես ուզում եմ կանգ առնել նրա այն «պրոյեկցիայի» վրա, որը ձեր այժմյան կյանքը որոշող Աստվածային մասնիկն է:

Դա մարդու **Բարձրագույն Եսն** է, որի մասին այսօր այնքան խոսում են:

Այլ կերպ ասած, **Բարձրագույն Եսը կարելի է սահմանել որպես ձեր Հոգու՝ տվյալ պահին Երկրի վրա մարմնավորված մասնիկ**: Այդ մասնիկն ունի անհրաժեշտ ամեն ինչ մարդու մեջ իր Աստվածային սկիզբը արթնացնելու համար:

Նա կրում է իր մեջ ձեր բոլոր նախկին մարմնավորումների, կուտակված ողջ փորձառության հիշողությունը, որովհետև գտնվում է ձեր Մայրական Հոգու և նրա բազմաթիվ ճյուղավորումների էներգետիկական տեղեկատվական դաշտում:

Սակայն նա իր մեջ արիություն է գտել իջնելու իր համար հնարավոր ամենացածր թրթիռների մեջ՝ եռաչափ աշխարհի կենսափորձով անցնելու համար: Անշուշտ, նա

գտնվում է մեկ-երկու չափում ավելի բարձր, քան ձեր ֆիզիկական մարմինը, դրա համար էլ կոչվում է «Բարձրագույն Ես»: Եվ այն մարդիկ, որոնց հաջողվում է սերտ կապ հաստատել իրենց Բարձրագույն Եսի հետ, ապրում են արդեն բոլորովին այլ՝ գիտակցված կյանքով:

Ինչպե՞ս կարելի է զգալ կապը սեփական Բարձրագույն Եսի հետ:

Ամենից առաջ սրտի չակրայի միջոցով, որին Բարձրագույն Եսը կարողանում է «հասնել»՝ առավելագույնս իջեցնելով իր թրթռանքը: Սրտագին ջերմությունը, որ զգում եք դուք, հենց ձեր Բարձրագույն Եսի «արձագանքն» է ֆիզիկական պլանում: Սակայն լիարժեք հաղորդակցությունը նրա հետ սկսվում է վեցերորդ և յոթերորդ չակրաներից, հատկապես՝ կոնաձև գեղձից (шишковидная железа), որոնք նուրբ պլանի էներգետիկական ալիքները որսալու ունակ ակեհավաքներ են: Եվ հիմա ձեզնից շատերի մոտ արդեն ակտիվացել են այդ երեք «ակեհավաքները»:

Ի՞նչ է դա նշանակում:

Ձեր վերին չակրաներն ու կոնաձև գեղձը լցվել են այնպիսի բարձրաթրթիռ էներգիաներով, որ ունակ են որսալու Բարձրագույն Եսի հղած ազդանշանները, իսկ ձեզնից ոմանք ունակ են հաղորդակցվելու իրենց Աստվածային Եսի և նույնիսկ Մայրական Հոգու հետ:

Բայց դրանք, ամեն դեպքում, բացառություններ են: Երկրի վրա ապրող մարդկանց մեծամասնությունը նուրբ պլանի հետ իր հաղորդակից լինելը կարող է զգալ միայն սրտի չակրայի միջոցով՝ սեր տածելով մտերիմների ու հարազատների, կենդանիների ու թռչունների, բնության ու ընդհանրապես Երկրի նկատմամբ:

Հուզական մեծ վերելքների պահերին, երբ ուրախությունն ու երջանկությունը ողողում են ձեզ, Բարձրագույն Եսը դառնում է գրեթե զգալի: Այստեղից էլ ծագել են հետևյալ արտահայտությունները՝ «Հոգին երգում է», «Հոգին հրճվում է», «Հոգին ցնծում է»: Սակայն արտակարգ տխրության պահերին նույնպես նա դրսևորում է իրեն. ձեր Հոգին «թախծում է», «լալիս է», «տնքում է ցավից»:

Այլ խոսքով՝ ձեր Բարձրագույն Եսը զգալ դուք կարող եք միայն այս կամ այն զգացմունքի գազաթնակետին, որովհետև ձեր առօրյա սովորական կյանքում նա ոչ մի կերպ չի դրսևորվում, կարծես թաքնվում է իր «պատյանի» մեջ, որ չթաթախվի եռաչափ աշխարհի նսեմ էներգիաների մեջ:

Ինչու՞ է այդպես լինում:

Այդ կերպ նա թույլ է տալիս ձեզ անցնելու ձեր դասերը երկվության աշխարհում:

Եվ միայն ձեր կյանքի կրիտիկական պահերին է գալիս օգնության՝ ջանալով նեցուկ լինել դժվար պահին կամ, ընդհակառակը, կիսել ձեզ հետ երջանկությունն ու հրճվանքը, որովհետև թե՛ մեկ, թե՛ մյուս զգացմունքը իր ավելորդ քանակով կարող է վնասել ձեր ֆիզիկական մարմնին:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՍ

Այսօր ես ավելի մանրամասն կպատմեմ, թե ինչ է ներկայացնում իրենից **Աստվածային Եսը**:

Դա Հոգու այն մասն է, որը միջանկյալ օղակ է մարդու Մայրական Հոգու և Բարձրագույն Եսի միջև:

Աստվածային Եսը, ի տարբերություն Բարձրագույն Եսի, ունի մասնիկների շատ ավելի ճյուղավորված «ցանց», որոնք կարող են գտնվել տարբեր չափումներում ու աշխարհներում:

Եվ ահա թե ինչպես է դա լինում:

Օրինակ՝ ձեր Աստվածային Եսը գտնվում է հինգերորդ չափման մեջ, իսկ Բարձրագույն Եսը՝ չորրորդ:

Նրանց միջև կա անտեսանելի կապ, որը թույլ է տալիս տեղեկատվություն փոխանակել, որովհետև նրանք այն քաղում են միևնույն աղբյուրից՝ Մայրական Հոգուց, որը կենում է է՛լ ավելի բարձր չափումներում, և, չնայած թրթռոնների տարբեր մակարդակներին, նրանք բոլորը գտնվում են միևնույն էներգետիկական տարածությունում:

Աստվածային Եսը, փոխակերպելով Մայրական Հոգու էներգիաները ավելի ցածրաթրթռոն էներգիաների, որպիսիք արդեն կարող է ընդունել ձեր Բարձրագույն Եսը, միևնույն ժամանակ Պահապանն է ձեր նախորդ մարմնավորման փորձի, որը հսկայական ազդեցություն է գործում ձեր ներկա մարմնավորման վրա:

Համաձայն Պատճառա-հետևանքային կապի օրենքի, նախորդ կյանքի չանցած դասերի յուրացումը շարունակվում է ներկա մարմնավորման մեջ, և Աստվածային Եսը իր մակարդակից հսկում է դրան:

Դա կատարվում է մարդու Բարձրագույն Եսի հետ սերտ հաղորդակցությամբ, որը կյանքի որոշակի պահերին կարող է անմիջապես ներգործել մարդու վրա: Վերցնենք կոնկրետ օրինակ, որպեսզի դուք ավելի լավ հասկանաք այդ փոխգործակցության մեխանիզմը:

Ենթադրենք՝ մարդը բռնված է ազահությամբ: Նա իրեն շրջապատում է նյութական առարկաներով՝ երբեմն իրեն ամենևին ոչ պիտանի, բայց շարունակ ուզում է ավելի ու ավելի շատ ունենալ: Դա արդեն վերածվում է հիվանդության, և նա ինքն էլ սկսում է հասկանալ: Նման վարքագծի պատճառը իր նախորդ մարմնավորման մեջ է, երբ նրան վիճակված է եղել մուրացիկ լինել ու նախանձով հետևել հարուստների կյանքին:

Եվ այս կյանքում նա ստանում է այն, ինչ երկար ժամանակ երազել էր: Ճակատագիրը թույլ է տալիս ունենալ այդ փորձը՝ բավարարելով նրա բոլոր քմահաճույքները: Բայց նրա Հոգին այլ բանի համար է ծնվել: Ձեռք բերելով հարուստ ու կուշտ կյանքի երկար փափագած փորձը, նա սկսում է հոգևոր աճի հնարավորություն փնտրել: Եվ այդ մարդու Բարձրագույն Եսը անում է ամեն ինչ, որ կասեցնի իր «խնամյալի» անվերջանալի վազքը նյութական բարիքների հետևից:

Եթե չեն գործում անցավ մեթոդները՝ «անապասելի» աչքին ընկած հոգևոր գրականությունը, տարատեսակ կյանքային իրավիճակները, որ կոչված են արթնացնելու նրա մեջ հոգևորը, իր ճանապարհին «պատահաբար» հանդիպած լուսավոր ու մաքուր մարդիկ, ապա գործի են դրվում արդեն բոլորովին այլ միջոցներ՝ սնանկությունը, թալանը, ունեցվածքի բաժանումը և մարդուն փողից զրկելու մյուս եղանակները:

Եվ հակառակը, երբ մեկը հայտնվում է ծանր նյութական կացության մեջ, սակայն ոգեպես այնքան հասուն է, որ պատրաստ է արժանապատվորեն տնօրինելու մեծ գումարներ, դրանք կտրվեն նրան ամենաանսպասելի ձևով:

Որպես կանոն, փոփոխությունները ձեր կյանքում տեղի են ունենում աստիճանաբար՝ խնայող ռեժիմով, այն հույսով, որ մարդը կանգ կառնի և կմտածի, թե ինչի համար է ինքն ապրում, ինչ է ուզում իր Հոգին, այլ ոչ թե անկշտում էզոն, ինչ կարող է ինքն անել ուրիշների համար, այլ ոչ միայն իր, մի խոսքով՝ այն հույսով, որ նա ինքնակամ կբռնի իր հոգևոր զարգացման ուղին:

Եվ սուկ ամենաանհույս դեպքերում է տեղի ունենում կյանքի կտրուկ փոփոխությունը, որը միշտ ձեր Մայրական Հոգու, Աստվածային Եսի և Բարձրագույն Եսի, ինչպես նաև այն Լուսավոր Ուժերի համատեղ ջանքերի արդյունքն է, որոնց նրանք կանչում են օգնության:

Բայց դա մի՛շտ արվում է ի բարօրություն ձեզ . . .

ՁԵՐ ՀՈԳՈՒ ՏԱՃԱՐԸ

Այսօր կշարունակենք մեր զրույցը մարդու Աստվածային Եսի մասին և կխոսենք ձեր կյանքում ունեցած նրա ևս մի դերի մասին: Շատ հաճախ Աստվածային Եսն «իր թևի տակ է առնում» հոգիների որոշակի մի խմբի, որն ընտրել է համանման կյանքային դասեր և դրանց հետ կապված փորձի ձեռքբերում:

Ինչու՞ է այդպես լինում:

Դարձյալ ապահովագրման և երաշխիքի համար, որովհետև, սուզվելով եռաչափ աշխարհի մեջ, որոշ հոգիներ կարող են չափից ավելի հեռանալ ընտրված ուղուց, իսկ որոշ հոգիներ այնուամենայնիվ կիրազործեն իրենց նախասահմանումը և ընդհանուր «գանձատուփը» կհամալրեն եռաչափ կյանքի փորձի անգին հատիկներով, որոնք այնքան անհրաժեշտ են իրենց Մայրական Հոգուն:

Մարդկային Հոգին կարելի է համեմատել հոյակերտ Տաճարի հետ, որը կառուցվում է շատ ու շատ դարերի ընթացքում: Հինավուրց ու հասուն Հոգու «Տաճարի» հիմքն արդեն բավական ամուր է, ինչպես և ինքը շենքը: Եվ ահա վերջապես ժամանակն է հարդարման աշխատանքների՝ այն վերջին գծերի, որոնք անգուզական շուք ու գեղեցկություն կհաղորդեն նրան: Եվ Աստվածային Եսը ստանձնում է տարատեսակ աշխատանքների դիտորդի դերը:

Հոգիների մի խումբ աշխատում է պատերի նկարագրման վրա, մի ուրիշ խումբ՝ առաստաղների, երրորդը սալարկում է չտեսնված գեղեցկության մարմարյա հատակը, չորրորդը բուրումնավետ այգիներ է տնկում Տաճարի շուրջը, հինգերորդը զարդարում է դրանք ցայտաղբյուրներով . . .

Եվ աշխատանքների ամեն տեսակը հսկում են արդեն Երկրի վրա մարմանավորված մարդկանց Բարձրագույն Եսերը: Պարտավորությունների նման բաշխումը թույլ է տալիս առավելագույնս հետևել յուրաքանչյուր հոգու ուղուն և ժամանակին շտկել այն, եթե նա հանկարծ շեղվի ճանապարհից՝ որոշելով ընտրել այլ զբաղմունք, ոչ այն, ինչում ինքը բացառիկ ու անգերազանցելի վարպետ է:

Աստվածային Եսը, ի տարբերություն Բարձրագույն Եսերի, ավելի բարձր չափումներում է կենում և հետևաբար պատկերը տեսնում է ամբողջությամբ: Դա նրան թույլ է տալիս կարգավորել իրավիճակը «շինարարական հրապարակում», որպեսզի այդ գործողության ոչ մի մասնակից չշեղվի իրեն ոչ պիտանի մանրուքներով և ամենակարճ ճանապարհով հասնի նպատակակետին:

Եվ այսպես, ձեր Հոգու բարդագույն աստիճանակարգը շոշափում է ոչ միայն Երկրի նուրբ պլանը, այլև ավելի բարձր չափումներ: Եվ նրա վերջին ասպեկտը, որի մասին ուզում եմ պատմել:

Ձեր Աստվածային Եսը հենց այն Միրո Բյուրեղն է, որն ապրում է ամեն մարդու սրտում:

Եվ հիմա այն ավելի ու ավելի է ահագնանում ձեր մեջ, բացվում է Լոտոսի չքնաղ ծաղկի նման՝ ողջ շրջակայքը ողողելով Աստվածային Լույսով ու Միրով:

Փորձե՛ք զգալ այն:

Հանգիստ ու ներդաշնակ վիճակում կանչեք ձեր Աստվածային Եսին և հետևեք ձեր զգայություններին: Աստվածային Եսը անպայման կարձագանքի ձեր կանչին, և դուք կզգաք՝ ինչպես է նա ջերմությամբ լցնում ձեր սրտի չակրան:

Արե՛ք դա որքան հնարավոր է հաճախ, զավակնե՛րս, որպեսզի միշտ մնաք բարձրագույն թրթիռներով էներգիաների մեջ, որոնք շոայլորեն պատրաստ է ձեզ բաշխել ձեր Աստվածային Եսը:

Օրհնու՛մ եմ ձեզ դրա համար:

Ձեզ անչափ սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեր հետ

ՄԻԱԶՈՒԼՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՄԻ ՀԵՏ

Ավարտելու համար մեր զրույցը մարդու Աստվածային Եսի մասին, ես ուզում եմ ձեզ տալ ևս մի քանի մեղիտացիա, որոնք կօգնեն կապ հաստատել նրա հետ և լսել նրա հուշումները:

Առաջին մեղիտացիան կանվանենք **«Մայրական Հոգու արձագանքը»**, նրա էությունը Աստվածային Եսի միջոցով Մայրական Հոգու հետ կապի հաստատումն է:

Երբ կսովորեք կանչել ձեր Աստվածային Եսը սրտի չակրայի՝ ձեր Սիրո Բյուրեղի մեջ, որի մասին խոսվեց նախորդ ուղերձում, հաջորդ քայլը կարող է լինել տարրալուծումը նրա էներգիաների մեջ:

Ի՞նչ է հարկավոր անել դրա համար:

Ընտրեք ձեր հոգուն հաճելի որևէ պատկեր: Դա կարող է լինել անեզր օվկիանոս, անհուն երկինք, ոլորտների երաժշտություն՝ ինչ ուզեք, կարևորը՝ զգաք, որ այդ տարածությունը տոգորված է Անսահման, Ամենապարար Անպայման Սիրով:

Եվ պատկերացրեք, ինչպես է ձեր Սիրո Բյուրեղը մեծանում՝ հասնելով հսկայական չափերի, ինչպես է կլանում ձեր ամբողջ էությունը: Դուք ամբողջությամբ միաձուլվում եք ձեր Աստվածային Եսի հետ, իսկ նա, իր հերթին, տարրալուծվում է Սիրո այդ տարածության մեջ, որտեղ ապրում է ձեր Մայրական Հոգին:

Նա արձագանքի նման կհնչի ձեր բովանդակ էության մեջ, այդ կերպ պատասխանելով ձեր հղած Սիրուն: Զգացեք ձեր ազգակցական կապը մեծագույն ու հինավուրց այդ Հոգու հետ, որը ծնունդ է տվել ձեզ, զգացեք նրա մայրական ջերմությունը և փորձեք «լսել» նրա խորհուրդներն ու ցուցումները:

Եթե ունեք հարց, որի պատասխանն ինքներդ ի վիճակի չեք գտնելու, կարող եք նրան ուղղել: Նա անպայման կարձագանքի ձեր կանչին ու օգնության խնդրանքին: Նրա պատասխանները ձեզ կհասնեն տեսքերի, պատկերների տեսքով կամ լսելի կլինեն ձեր նուրբ զգայական օրգաններին: Հնարավոր է նաև, որ հայտնվեն ավելի ուշ՝ նշանների և հուշումների տեսքով, կամ երազում գան ձեզ:

Ձեր Աստվածային Եսը կանի ամեն հնարավոր բան, որպեսզի դրանք ձեզ հասցնի լավագույն հասկանալի ձևով և ամենակարճ ժամկետում: Եվ ևս մի մեղիտացիա եմ ուզում ձեզ տալ այսօր:

Կանվանենք այն **«Միասնական սիլուետ»**:

Մրա համար պիտի պատկերացնեք ձեզ եռակի սիլուետի տեսքով. ներսում ձեր ֆիզիկական մարմինն է, հետո գալիս է Բարձրագույն Եսը, այնուհետև՝ Աստվածային Եսը: Ընդ որում, ամեն հաջորդ սիլուետ ավելի ու ավելի նոսր է:

Ակներևության համար կարող եք ընտրել ինչ-որ գույն, և ձեր ֆիզիկական մարմնից հեռանալու համեմատ գույները կփոխեն իրենց թանձրությունը: Այնուհետև

պատկերացրեք, ինչպես է ձեր ֆիզիկական մարմինը չափերով մեծանում, նույնպես ուստիճանաբար ձուլվում Բարձրագույն Եսի սիլուետին:

Հետո ճիշտ նույն կերպ հետզհետե մեծանում է նաև այդ սիլուետը, մինչև որ հասնում է Աստվածային Եսի չափերին: Դուք դառնում եք Հսկայական Միասնական Միլուետ: Այդպիսով, ձեր ֆիզիկական թաղանթն ու գիտակցությունը ձեռք են բերում արդեն բոլորովին այլ թրթռանք:

Դա կօգնի ձեր մարմնին ակտիվացնելու ձեր օրգանիզմի բոլոր թաքնված կարողությունները, իսկ ձեր ենթագիտակցությանը՝ թաքնված խորքային հիշողությունը ձեր բոլոր նախորդ մարմնավորումների մասին:

Մա շատ ուժեղ մեղիտացիա է, հետևաբար այն հարկավոր է անել անշտապ, կանչելով բոլոր ձեր Երկնային օգնականներին:

Օրհնում եմ ձեզ, զավակներ՝ ըս, և անչափ սիրում . . .

ՀՈԳՈՒ ԴԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Իմ այսօրվա ուղերձով ես ուզում եմ կրկին անդրադառնալ մարդու Հոգու կառուցվածքին և նրա բոլոր բաղադրիչների փոխներգործությանը: Ինչու՞ է ձեր Հոգին բազմաչափ և ինչու՞ է գտնվում միաժամանակ տարբեր չափումներում:

Նախ և առաջ՝ որպեսզի չկորցնի իր կապը Արարչի հետ, որի մասնիկն է յուրաքանչյուր Հոգի: Սակայն քանի որ **Մայրական Հոգու**, - նրա Աստվածային մակարդակի, - բարձր թրթռանքը թույլ չի տալիս իրեն իջնել ստորին չափումների աշխարհներ, նա ստիպված է լինում կոտորակել (ֆրագմենտացնել) իրեն՝ աստիճանաբար իջեցնելով իր թրթռանքը:

Առաջին «հանգրվանը» այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Երկրի վրա մարմնավորված հոգին, **Աստվածային Եսն** է, որի մեջ խտացած է նրա վերջին մարմնավորումների փորձը, ինչով էլ, ըստ պատճառա-հետևանքային օրենքի, պայմանավորվում է հաջորդ մարմնավորումը:

Այնուհետև, եռաչափ աշխարհում ձեռք բերված փորձի բազմատարբերակության նպատակով, նա բաժանվում է շատ **Բարձրագույն Եսերի**, որոնք կոչված են որոշակի դասեր անցնելու Երկրի վրա՝ քաղելու նոր փորձ, որպիսին դեռ չկա Մայրական Հոգու «զանձատուփում»:

Հետո ամեն Բարձրագույն Ես բաժանվում է ևս տասներկու մասնիկների, որոնք մարմնավորման են գնում միևնույն նպատակով՝ ձեռք բերել կոնկրետ պակասող փորձը:

Եվ եթե այդ մասնիկներից թեկուզ մեկը լիովին կատարում է իր նախասահմանումը՝ այնպես, ինչպես մտածվել է նախքան իր ծնունդը, մարդու Բարձրագույն Եսը համարում է, որ իր առաքելությունը Երկրի վրա հաջողվել է: Հոգու բոլոր երեք բաղադրիչները

սերտորեն կապված են իրար, ինչպես պորտալարով, որով սաղմն է սնուցվում մայրական արգանդում:

Այդ էներգետիկական կապը մշտական է ու անփոփոխ, և անցնելով երկար ճանապարհ Մայրական Հոգուց մինչև Բարձրագույն Եսի՝ Երկրի վրա մարմնավորված մասնիկներից մեկը, այդ էներգիան աստիճանաբար փոխակերպվում է ավելի ու ավելի ցածրաթրթիռ էներգիաների, որոնք թույլ են տալիս մարդուն կենալ եռաչափ աշխարհում:

Այսպիսով, ծնվելով Երկրի վրա, մարդը կորցնում է իր Հոգու հետ ունեցած կապը, քանի որ ընդունակ չէ երկվության աշխարհում ապրելով իր գիտակցությամբ հասնել նրա կեցած բարձունքներին:

Այդպես շարունակվել է բազում դարեր ու հազարամյակներ: Այդ ընթացքում քանի-քանի անգամ Երկիր են իջել Մեծագույն Հոգիներ, որոնք փորձել են օգնել մարդկանց հիշելու իրենց Աստվածային ծագումը: Նրանք հալածվել են, չարչարվել ու խոշտանգվել, բայց հավատարիմ են մնացել Արարչին և այն առաքելությանը, որով եկել են Երկիր: Նրանց շնորհիվ մարդու մեջ հարատևել է Աստծու կայծը, հազիվհազ նշողել, բայց չի մարել իսպառ:

Եվ ահա եկել է մի ժամանակ, երբ այդ կայծը կարող է համայն մարդկության զարթոնքի «բոցի» վերածվել: Եվ ձեր Հոգու բոլոր բարձրագույն մակարդակները կոչված են հսկայական դեր խաղալու դրանում:

Այժմ Երկիր եկող բարձրաթրթիռ էներգիաները անցկացվում են ձեր Աստվածային և Բարձրագույն Եսերի միջով, որի արդյունքում ձեռք են բերում այնպիսի թրթիռներ, որոնք արդեն ի վիճակի են ընդունելու ձեր գիտակցությունն ու ֆիզիկական մարմինը:

Հոգու բազմաչափության շնորհիվ մարդկության Անցումը նոր չափման մեջ ընթանում է բավական սահուն ու անցավ ձևով: Ի լրումն դրա, այն նպաստում է մարդու և իր Հոգու բոլոր բաղադրիչների ավելի սերտ կապին:

Այժմ դուք առավել քան երբևէ ունակ եք լսելու և զգալու նրան. ոմանք սուկ Բարձրագույն Եսի մակարդակով, ոմանք՝ Աստվածայինի, իսկ ոմանք էլ հենց Մայրական Հոգու: Գալիս է Ոգու, Հոգու և Մարմնի երկար սպասված Եռամիասնությունը, որը մարդկությանը կվերադարձնի իր Աստվածայնությունը:

ՄԱՐՄՆ

Այսօր կդառնանք Աստվածային եռամիասնության վերջին բաղադրիչին՝ ձեր մարմնին, ֆիզիկական թաղանթին, որով Երկիր է գալիս ձեր Հոգին:

Մարդու Ոգու և մարմնի միջև, չնայած թրթիռների հսկայական տարբերությանը, այնուամենայնիվ պահպանվում է էներգետիկական կապը: Իսկ Ոգու էներգիան ձեզ հասցնել օգնում է ձեր Հոգին՝ անցկացնելով այն իր բոլոր բաղադրիչների միջով, որն ի

վերջո թույլ է տալիս ձեզ ընդունել այդ էներգիան այն ծավալով, որն անհրաժեշտ է ձեզ կյանքի այս կամ այն պահին:

Ինչպես տեսնում եք, Ոգու, Հոգու և Մարմնի Աստվածային եռամիասնությունը գնում է վայրընթաց գծով, քանի որ մարդու մարմինը, որպես երրորդ չափման աշխարհում կենտո պինդ նյութական սուբստանց, ի վիճակի է ամփոփելու իր մեջ Ոգու և Հոգու բարձրաթրթիռ էներգիաների սոսկ չնչին մասը:

Բայց միշտ այդպես չի եղել: Երկրի առաջին մարդիկ Աստվածների էին նման, այդ պատճառով էլ նրանց մարմինները նույնպես բոլորովին այլ կառուցվածք ու թրթռանք ունեին: Դրանք լուսային բյուրեղային մարմիններ էին, ընդունակ կերպափոխվելու ըստ մարդու ցանկության, ինչպես նաև ինքնավերականգնվելու՝ վնասվածքների դեպքում:

Այդ մարմինները ո՛չ ցուրտ էին զգում, ո՛չ սով: Եվ չգիտեին՝ ինչ է հիվանդությունը: Կատարյալ մարմիններ Աստվածամարդկանց, որոնց գիտակցությունը հոգևոր զարգացման այնպիսի մակարդակ ուներ, որը թույլ չէր տալիս և ոչ մի բացասական միտք կամ զգացմունք:

Սակայն Երկրի վրա երկվության աշխարհի ծննդի հետ, որին բնորոշ էին արդեն ցածր թրթիռներով զգացմունքներ, մարդը սկսեց սրընթաց «թանձրանալ», մինչև որ հասավ իր ներկայիս ֆիզիկական մարմնին: Այդ պրոցեսն անխուսափելի էր. մարմնի թրթռանքը պիտի համապատասխանի մարդու գիտակցության թրթռանքին, որովհետև հենց **գիտակցությունն է կառավարում մարմինը:**

Գիտակցությունը, երկվության աշխարհի ընկնելու հետ, սկսեց սերել արդեն բոլորովին այլ՝ բաժանման էներգիաներ, և եռաչափ գիտակցության ծնունդ տված բոլոր բացասական էներգիաները սկսեցին անդրադառնալ մարդու ֆիզիկական վիճակի վրա:

Այդպես առաջ եկան մարմնի հիվանդությունները:

Յուրաքանչյուր զգացմունք իր պրոյեկցիան ունի իրեն համապատասխանող օրգանում, հետևաբար, հայտնվելով նախ մարդու նուրբ մարմիններում որպես ցածրաթրթիռ բացասական էներգիայի թանձրուկ, այն հետո իջնում է ֆիզիկական պլան՝ ծնունդ տալով հիվանդության ու ցավի:

Երկար ժամանակ մարդիկ ոչ մի կերպ չէին կապում հիվանդությունները իրենց մտքերի ու զգացմունքների հետ: Բազմաթիվ հիվանդությունները նրանք ընդունում էին որպես անխուսափելի մի բան և փորձում էին պայքարել դրանց դեմ տարատեսակ միջոցներով՝ բացառելով ապաքինման միակ ճշմարիտ ուղին՝ մաքուր պահել սեփական մտքերն ու զգացմունքները:

Մինչդեռ մարդկային մարմինը, թեկուզ թանձրանալով մինչև երրորդ չափման մակարդակ, դարձյալ բացառիկ կատարյալ Աստվածային «գործիք» է, որը պահում է իր մեջ իր երկրային կյանքի այն ժամանակաշրջանի հիշողությունը, երբ լուսային բյուրեղային էր՝ ուժեղ, առողջ, անխոցելի, ցավին ու տառապանքին անհաղորդ:

Այդ իմացությունները դրված են նրա գենետիկական հիշողության մեջ, և հաճախ, մահացու վտանգի պահերին, մարդկային օրգանիզմի անհատնում ուժերը երևան են գալիս ամենահեքիաթային ձևով:

Եվ հիմա, զավակներս, եկել է ժամանակը, որ կյանքի վերակոչեք ձեր Աստվածային մարմինը, վերադարձնեք նրա կորուսյալ ունակությունները, ազատեք ինքներդ ձեզ տառապանքից ու ցավից: Ժամանակն է, որ հակառակ ուղղությամբ մղեք ձեր զարգացման պրոցեսը՝ փոխակերպեք ձեր գիտակցությունը, իսկ հետո նաև ապաթանձրացնեք ձեր մարմինը:

Եվ իմ հաջորդ ուղերձներում ես կպատմեմ, թե ինչպես կարելի դա անել:

ՏԻԵԶԵՐՔԻ ՄԱՏՐԻՑԸ

Եվ այսպես, շարունակենք մեր զրույցը, թե ինչ է մարդկային մարմինը՝ Աստվածային եռամիասնության այդ անկապտելի բաղադրիչը:

Եթե շատ հակիրճ ձևակերպենք, **ձեր մարմինը Տիեզերքի մատրիցն է:** Եվ այժմ ես ավելի հանգամանորեն կխոսեմ այդ մասին: Բանն այն է, որ Տիեզերքը միասնական կենդանի օրգանիզմ է, որի մեջ ոչ մի ավելորդ ու պատահական բան չկա: Նրա ամեն մասը լրացնում է մյուսին, և բոլոր մասերը կապված են միմյանց ընդհանուր էներգետիկական «արյունատար համակարգով»:

Ճիշտ այնպես, ինչպես ձեր մարմնի օրգանները, որոնք բոլորն էլ մեկը մյուսի շարունակությունն են և միաժամանակ ձեր ֆիզիկական թաղանթի կենսապահովման ամբողջական ու ընդհանուր համակարգը: Ձեր մարմնի որևէ օրգանի խափանումը բերում է մյուս օրգանների շարահար հիվանդություններին:

Նույնը կատարվում է նաև Տիեզերքում: Նրա մասնիկը՝ «օրգանը» հանդիսացող մոլորակներից մեկի կործանումը կամ «հիվանդությունը» փոխում է նրա ողջ էներգետիկական կառուցվածքը, որը պահում է նրա ներքին հավասարակշռությունը:

Հենց դա է հիմա կատարվում Երկրի հետ: Ծանր հիվանդ է Երկիրը: «Քաղցկեղի ուռուցքը» «մետաստազներ» է սովել ամբողջ Երկրով մեկ, և նրա կործանման դեպքում կտուժեն Տիեզերքի մյուս «օրգաններն» ու ամբողջական համակարգերը: Իզուր չէ, որ հենց քաղցկեղն է դարձել Երկրի վրա ամենատարածված հիվանդությունը, որովհետև հենց քաղցկեղն է տալիս ամենավառ օրինակը, թե ինչպես են մարդուն կրծում ներսից իր կրքերն ու բացասական զգացմունքները:

Դուք արդեն գիտեք, որ անկարելի է բուժել մարմինը՝ առանց վերացնելու նրա հիվանդության պատճառը: Բայց դրա համար մարդը պետք է փոխի իր գիտակցությունը՝ սովորի մտածել այլ կատեգորիաներով, տեսնել իր խնդիրների ու հիվանդությունների խորքային՝ հոգևոր պատճառները, այլ ոչ թե այն, ինչ մակերեսին է: Այլապես ցանկացած բուժում սուկ ժամանակավոր արդյունքներ կտա:

Եվ հիմա, զավակներս, ձեր և ձեր Երկրի փրկությունը կախված է միմիայն ձեզնից, ձեր անկեղծ մտադրությունից՝ վերափոխելու անթիվ անհամար բացասական զգացմունքների ծնունդ տվող երկվության մտածողությունը միաբնեռ՝ Աստվածային մտածողության, որի հիմքում Անպայման Ամենապարար Մերն է:

Եվ դա միանգամայն հնարավոր է: Դրա համար դուք պետք է սովորեք ապրել Ոգու մեջ, սերտորեն կապվելով ձեր Հոգու հետ, ինչն անկասելիորեն կսկսի փոխել ձեր գիտակցությունն ու մարմինը՝ պարարելով բարձրագույն թրթռանքի էներգիաներով և այդ կերպ վերականգնելով կորսված ներքին հավասարակշռությունն ու ներդաշնակությունը:

Այդպիսով դուք կփրկեք ոչ միայն ձեզ՝ ազատվելով ցավից ու տառապանքից, այլև ձեր Երկիրն ու բովանդակ Տիեզերքը, չէ՞ որ Երկիր մոլորակը Տիեզերքի մարգարիտն է, նրա սիրտը: Եվ հիմա այդ սիրտը գրեթե դուրս է եկել շարքից:

Բոլոր Լուսավոր Ուժերը, ձեր Գալակտիկական ընտանիքը, զուգահեռ աշխարհների ներկայացուցիչները անում են ամեն հնարավոր բան իրենց սիրելի մոլորակը և նրա բնակիչներին փրկելու համար: Եվ այդուհանդերձ, նրանք կարող են լուրջ վերացնել կամ մեղմել ձեր դարերով կուտակված հիվանդությունների հետևանքները, բայց ձեր վերջնական ապաքինումը, զավակներս, ձեռք ձեռքում է:

Եվ մենք միասին պիտի քայլ առ քայլ ապաքինվենք հիմա՝ հոգեպես ու ֆիզիկապես, հետ բերելով ձեր նախասկզբնական Աստվածային մարմինը:

ՉՈՐՐՈՐԴ ՉԱՓՄԱՆ ՄԱՐԴԸ

Շուտով ես կսկսեմ ձեզ տալ պրակտիկաներ, որոնք կոչված են կամրջելու ձեր Ոգին, Հոգին ու Մարմինը, ինչը հնարավորություն կտա ձեզ աստիճանաբար փոխակերպել ձեր մարմինը պինդ նյութականից նուրբ նյութականի՝ լուսային բյուրեղայինի:

Մակայն պետք է հասկանալ, որ այդ պրակտիկաները մատչելի կլինեն նրանց, որոնց հաջողվել է բարձրացնել իրենց թրթռանքը մինչև այն սահմանային մակարդակը, որը բաժանում է եռաչափ հոծ աշխարհը հոգևոր աշխարհից, այսինքն՝ նրանց, որոնց գիտակցությունը հասել է առնվազն չորրորդ չափման:

Եվ այդպիսի մարդիկ հիմա քիչ չեն Երկրի վրա: Բայց նախ եկեք հիշենք, թե ինչ նշաններով է երևում, որ դուք արդեն չորրորդ չափման մեջ եք ապրում:

Առաջին նշան: Դուք չեք դիտում լրատվական հաղորդումները, թեև տեղյակ եք ձեր մոլորակի անցուդարձին: Չեք մասնակցում հուզախոռով քննարկումներին քաղաքական դեպքերի, ինչպես նաև սոցիալական, ռազմական ու կրոնական հակամարտությունների վերաբերյալ: Դուք հասկանում եք, որ ներկայումս Երկրի վրա կատարվող ամեն բան,

ընդհուպ մարդկային զոհերով ամենաողբերգական իրադարձությունները, Երկրի մաքրման պրոցեսն է, որն անխուսափելի է ամբողջ մոլորակի՝ մի չափումից այլ չափում անցնելու պարագայում:

Երկրորդ նշան: Դուք երբեք չեք դատում, ո՛չ ձեր կամ այլ երկրի իշխանություններին, ո՛չ ուրիշ ազգերին կամ ժողովուրդներին, ո՛չ ձեր հարազատներին ու մտերիմներին, ո՛չ ընկերներին ու աշխատակիցներին:

Դուք ընդունում եք բոլորին այնպես, ինչպես կան: Իրավունք եք տալիս նրանց ապրելու իրենց ուզածի պես՝ չխախտելով ուրիշի կամքի ազատությունն ու ընտրության ազատությունը և ոչ ոքի չպարտադրելով ձեր կարծիքն ու կյանքային հայացքները:

Դուք հրաշալի հասկանում եք, որ ամեն ոք բացառիկ է, ամեն ոք գտնվում է զարգացման իր մակարդակին, ամեն ոք մեկ ուրիշի համար միաժամանակ և՛ ուսուցիչ է, և՛ աշակերտ, որ դուք ամենքդ, չնայած ձեր բոլոր տարբերություններին, Մեկ Ամբողջություն եք՝ Արարչի զավակները:

Յրրորդ նշան: Ձեր թրթիռներն արդեն այնքան են բարձրացել, որ ֆիզիկապես զգում եք ձեր նուրբ զգայական օրգանները՝ ձեր բոլոր չակրաները:

Դուք արդեն կարողանում եք զգալ՝ որքանով են դրանք մաքուր ու իրար հետ հավասարակշռված: Հարկ եղած դեպքում դուք կարող եք դրանք մաքրել և ներդաշնակության բերել: Ինչու՞ է դա կարևոր:

Արդեն բազմիցս ասվել է իմ ուղերձներում, որ ձեր չակրային համակարգը հենց այն Աստվածային «կամերտոնն» է, որն ունակ է որսալու նրբագույն էներգետիկական երանգները, այդպիսով մաքուր ու ներդաշնակ պահելով թե՛ ձեր Հոգին, թե՛ շրջակա ողջ տարածությունը:

Չորրորդ նշան: Ձեր վերին չակրաները լիովին ակտիվացած են, իսկ ոմանք սկսում են զգալ նաև կոնաձև գեղձը:

Որպես կանոն, դուք կարող եք դրանք զգալ Տիեզերքի Բարձրագույն Ուժերի իսկական ուղերձները կարդալիս, ինչպես նաև խոր մեդիտացիաների ժամանակ, երբ միավորվում եք ձեր Բարձրագույն կամ Աստվածային Եսի, երբեմն էլ Մայրական Հոգու հետ: Ձեր «երրորդ աչքը», թագի չակրան (коронная чакра) և կոնաձև գեղձը կարող են ջերմությամբ լցվել, տրոփել կամ թրթռալ:

Բոլոր այս ֆիզիկական երևույթները խոսում են այն մասին, որ ձեր նուրբ մարմիններն արդեն արձագանքում են Երկրի բարձր թրթիռներին, որոնք օրեցօր ավելի ու ավելի են ողողում Երկիրը:

Եվ հինգերորդ նշան: Դուք արդեն զգում ու տեսնում եք ձեզ ոչ իբրև եռաչափ աշխարհի մարդ, այլ Հոգի, որը հանգիստ դիտում է թե՛ սեփական կյանքում, թե՛ համայն մոլորակում կատարվող բոլոր իրադարձությունները:

Դուք հասկանում եք, որ այս կյանքում ամեն ինչ սուկ «բեմ» է ձեզ համար՝ խաղահրապարակ, որտեղ կատարելացնում եք աշխարհաճանաչողության ձեր

վարպետությունը, իսկ ձեր ճանապարհին հանդիպող մարդիկ բոլորը ձեր «բեմական» խաղընկերներն են, և ոչ թե չարագործներ կամ սադրիչներ, խորամանկներ կամ հիմարներ, գողեր կամ խաբեբաներ. . . Նրանք կոփում են ձեր Հոգին, սովորեցնում Մեր, իմաստություն ու համբերանք: Նրանք օգնում են ձեզ անցնելու ձեր ճանապարհը և հասնելու նպատակակետին՝ Համբարձմանը ֆիզիկական մարմիններով:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿՐԿՆԱԿՆԵՐ

Եվ այսպես, այսօր մենք կանդրադառնանք պրակտիկաներին, որոնք կոչված են վերածնելու ձեր Աստվածային մարմինը, որը նվազ կարևորություն չունի մեր Եռամիասնության մեջ, քան մնացած բաղադրիչները:

Չէ որ հենց ձեր մարմինն է Ոգու և Հոգու զետեղարանը, պարզապես դուք մոռացել եք այդ մասին՝ հարյուրամյակներ ի վեր խորասուզված լինելով եռաչափ հոծ աշխարհի մեջ: Ինչպես արդեն ասել եմ, ձեր մարմնի ամեն օրգանը Տիեզերքի որոշակի մասի պրոյեկցիան է:

Մենք մանրամասն չենք խոսի այդ մասին, որովհետև տվյալ պահին ձեզ համար ավելի կարևոր է այդ հարցի պրակտիկ կողմը, բայց երբ ժամանակը գա, ճշմարտությունն իր ամբողջ ծավալով կբացվի ձեզ համար: Իսկ առայժմ սկսենք քչից: Մենք կլցնենք ձեր մարմնի յուրաքանչյուր օրգանը այն էներգիայով, որը համապատասխանում է Տիեզերքի նրա կրկնակին:

Պրակտիկան, որ այժմ տալիս եմ, ունիվերսալ է, այն կարելի է կիրառել ինչպես ամեն առանձին օրգանի, այնպես էլ բոլոր օրգանների նկատմամբ միասնաբար: Սակայն, ինչ խոսք, առաջին հերթին հարկավոր է աշխատել մարմնի այն մասերի հետ, որոնք բուժման կարիք ունեն:

Մեր պրակտիկան կանվանենք **«Տիեզերական կրկնակներ»:**

Այն հարկավոր է անել անշտապ, հանգիստ ու ներդաշնակ վիճակում:

Նստեք մեղիտացիայի, լիովին թուլացեք, խոր շնչեք, կանչեք ձեր բոլոր Երկնային օգնականներին և. . . տարրալուծվեք Ոգու մեջ՝ այդ զրնգուն լռության, անեզր Կոսմոսի, Սիրո համապարփակ էներգիայի. . .

Պատկերացրեք, որ դուք մի ոսկյա ավազահատիկ եք այդ փառահեղ, հոյակապ և հավիտենական Աստվածային տարածության մեջ. . .

Ձեր մարմինը կշիռ չունի. . .

Դուք ճախրում եք Սիրո այդ օղեղեն «օվկիանոսում» ազատ, ինչպես թռչուն, և ձեր շուրջբոլորը տեսնում եք բյուրավոր նույնպիսի ոսկեհատիկներ. . .

Ձեզ երջանկությամբ ու հրճվանքով է լցնում այն զգացումը, որ դուք մենակ չեք Տիեզերքում:

Դուք զգում եք, որ բոլոր այդ Հոգիներն այնքան հարազատ են, ասես ձեր մասնիկը լինեն: Նրանք բոլորն այնպիսի Անսահման Սեր են ճառագում, որ ձեր շունչը կտրվում է և երանություն է համակում ձեր բովանդակ եությանը . . .

Եվ միայն հասնելով լիակատար երանության և Տիեզերքի ու իր բոլոր բնակիչների հետ Միավորման այդ վիճակին, անցնում եք պրակտիկայի երկրորդ փաժնին:

Խնդրեք բուժման կարոտ ձեր օրգանի տիեզերական կրկնակին իր բարձր թրթիռներով լցնել այդ օրգանը, տարրալուծել բոլոր բացասական էներգիաները, որ կուտակվել են նրա մեջ եռաչափ աշխարհում ապրած տարիների ընթացքում, շնորհել նրան Լուսիսի և Սիրո իր կազդուրիչ ու բարերար կոսմիկական էներգիան . . .

Իսկ հետո պարզապես վայելեք այդ էներգիայով պարարված լինելու զգացումը . . .

Նա ձեր մարմին կմտնի տաքուկ, քնքուշ, հանդարտ ու համաչափ տրոփող ալիքներով . . .

Կարգավորեք այդ հոսքն ու ալիքները: Զրուցեք նրանց հետ: Նրանք կենդանի են: Նրանք ունեն գիտակցություն՝ ամենաբարձր թրթռանքի: Խնդրեք նրանց կենտրոնացնել իրենց էներգիան այն բանի վրա, որն ամենաշատն է անհանգստացնում ձեզ: Դուք անպայման կզգաք հետադարձ կապը, գոնե էներգապես . . .

Եվ թող ձեր տիեզերական կրկնակների հետ վերամիավորումը դառնա առաջին քայլը ձեր երրորդ չափման ֆիզիկական մարմինները Աստվածային լուսային բյուրեղային մարմինների փոխակերպելու ճանապարհին:

Եվ ես օրհնում եմ ձեզ դրա համար . . .

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՄԻՐՏ

Այսօր ես ձեզ կտամ ևս մեկ պրակտիկա, որը կօգնի ձեր մարմնին հարմարվել Երկրի նոր թրթիռներին:

Անվանենք այն **«Միասնական սիրտ»**:

Նրա համար հարկավոր է մտնել մեղիտատիվ վիճակի մեջ, լիովին թուլանալ, խոր շնչել և կանչել ձեր բոլոր Երկնային օգնականներին:

Այնուհետև պատկերացրեք, թե գտնվում եք ձեր Երկրի ընդերքում՝ ամենակենտրոնում: Դուք լրիվ ձուլված եք ձեր Բարձրագույն և Աստվածային Եսերի հետ, և ձեր հսկա սիլուետն իրենով է լցրել Երկրի գրեթե ողջ ներքին տարածությունը:

Դա արդեն ձեր հոծ մարմինը չէ, այլ առավելագույնս նոսրացած մի մարմին՝ ամենաբարձր թրթռանքով: Այն ճկուն է ու դյուրաշարժ:

Դուք կարող եք ուզած ձևը տալ նրան: Օգտվե՛ք այդ հնարավորությունից: Երևակայությամբ ստեղծե՛ք ձեր երազած իդեալական, երիտասարդ ու գեղեցիկ մարմինը:

Իսկ հետո փորձեք տեսնել Հինգերորդ չափման Երկիրն այնպես, ինչպես պատկերվել է ձեր երևակայության մեջ. նախաստեղծ չքնաղ բնություն, հյութեղ վառ կանաչ, գետեր, լճեր ու ծովեր՝ բյուրեղյա վճիտ, թափանցիկ ջրով, գեղեցիկ կենդանիներ ու թռչուններ. . .

Իսկ ինքներդ՝ անբաժանելի մասն այդ աներևակայելի գեղեցկության ու մաքրության. . .

Ապա ականջ դրեք այդ նոր Երկրի սրտի տրոփյունին. . .

Որսացեք նրա ռիթմը. . .

Զգացեք, ինչպես է ձեր սեփական սիրտը, ասես անսալով, սկսում կամացուկ հարմարվել նրան: Իսկ հետո, համարձակություն առնելով, սկսում է խփել ավելի ուժգին ու վստահ, ավելի ու ավելի արձագանքելով (входя в резонанс) ձեր մոլորակի սրտի տրոփյունին:

Ձեզ թվում է, թե նրանք արդեն միաձուլվել են: Հիմա դա մեկ հսկայական սիրտ է՝ ձեր Մայր Երկրի և ձեր՝ իր սիրասուն զավակի սիրտը: Ձեր սրտերը բաբախում են համահունչ. . .

Նրանք նույն թրթռանքն ունեն, նույն ռիթմը. . .

Մնացեք այդպես երկար, ըմբռնվե՛ք Երկրի հետ լիակատար միավորման զգացումը: Դա այնքան գեղեցիկ է ու վեհ. . .

Եվ այնքան խորհրդանշական. Մայրն իր զավակի հետ, որին կրում է իր սրտի ներքո,- իր հարազատ արյունը, իր մասնիկը. . .

Հետզհետե ձեր միասնական սիրտը սկսում է միևնույն ռիթմով բաբախել ձեր Գալակտիկայի, ապա նաև ողջ Տիեզերքի հետ. . .

Աստիճանաբար սովորեք այդ վիճակի մեջ մտնել արդեն առանց մեղիտացիայի, որպեսզի կյանքի դժվարին պահերին պատասպարվեք Մայր-Երկրի «արգանդում», համահունչ դարձեք նրա թրթիռների հետ: Եվ նա կպահպանի ձեզ փորձանքներից ու դժբախտություններից, պարարելով ձեզ իր մայրական ջերմությամբ ու Սիրով. . .

ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ

Իմ հաջորդ ուղերձներում կուզեի հանձնարարականներ տալ, թե ինչպես կարելի է հարմարեցնել (состроить) ձեր մարմինը Երկրի նոր թրթիռներին, մնալով եռաչափ աշխարհի իրողություններում:

Մասնակիորեն արդեն չորրորդ, իսկ ումանց պարագայում Հինգերորդ չափում տեղափոխված ձեր գիտակցության և ձեր եռաչափ խտությամբ մարմնի անհամապատասխանությունն ունի իր առավելություններն ու թերությունները:

Որո՞նք են առավելությունները:

Նախ և առաջ այն, որ դուք հնարավորություն եք ստացել վեր մղել մարմինը՝ հասցնելով գիտակցության մակարդակին, որն արդեն առաջին պլան է ելնում: Դա նման է նրան, որ ափին կանգնած մարդը, տեսնելով խեղդվողին, նետվում է օգնության: Բայց հետո ամեն ինչ կախված է նրանից, կբավականացնե՞ն արդյոք նրա ուժերը այդ ծանր «բեռի» հետ ափ դուրս գալու համար, թե՞ երկուսն էլ ջրասույզ կլինեն:

Հենց դա է կատարվում հիմա ձեզնից շատերի հետ:

Շատերիդ մեջ անասելի մեծ է ցանկությունը՝ օգնելու սեփական ֆիզիկական մարմնին փոխակերպվել, այդպիսով հնարավորություն տալով նրան համբարձվելու: Բայց, ցավոք, անասելի մեծ է նաև իներցիան, որն այսքան ժամանակ տարել է ձեզ և որն իսպառ հաղթահարել ամեն գիտակցության չէ, որ հաջողվում է:

Մեծ մասիդ մոտ հոգևոր զարգացումն ընթանում է թռիչքներով՝ ըստ տրամադրության, հնարավորության, ինքնազգացողության . . .

Եվ միայն քչերն են ընդունակ ամենօրյա աշխատանքի. դանդաղ, բայց վստահ, առանց հետ նայելու, տուրք չտալով աստրալ էությունների սադրանքներին առաջ շարժվել, վերահսկելով իրենց ամեն միտքը և ազատվելով վատ սովորություններից, որոնք ծնունդ են տալիս բացասական զգացմունքների և դրանցով պայմանավորված արարքների:

Այլ կերպ ասած, տարիներով մշակած տեսությունը շատերիդ մոտ ոչ մի կերպ չի կարողանում գործնական կիրառություն գտնել: Եվ այդուհանդերձ, սիրելիներս, նման ձգտման առկայությունը ձեր մեջ, արդեն հսկայական առավելություն է ձեր հոգևոր վերելքի ճանապարհին:

Իսկ թերությունն այն է, որ ձեր գիտակցության և ֆիզիկական մարմնի թրթիռային խզվածքն այնքան մեծ է, որ հանգեցնում է վերջինիս անխուսափելի դեգրադացման: Դա կատարվում է այն պատճառով, որ մարմինը գրկվում է իր էներգետիկական սնուցումից, որը նախկինում եռաչափ աշխարհի գիտակցությունն էր ապահովում:

Շնորհիվ նրա հետ ունեցած իր միասնական թրթիռների, ձեր մարմինը հարմարվում էր գոյատևման դժվարին պայմաններին, օրինակ՝ մեծ քաղաքներում ապրելուն, անառողջ սննդին և աղտոտված օդին, հուզական սթրեսներին և գերբեռնվածությանը: Եվ ձեր գիտակցությունը բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր ձեր մարմնին հաղթահարել դրանք:

Եթե եռաչափ աշխարհի մարդկանց մոտ գիտակցությունն ու մարմինը մեկ ամբողջություն են կազմում, ապա Համբարձման ուղին բռնած հոգևոր մարդու պարագայում գիտակցությունն ակամա կտրվում է կոպիտ նյութական սուբստանցից՝ ձեր ֆիզիկական թաղանթից:

Եվ թրթիռային այդ ահռելի խզումը թողնում է ձեր մարմինն անտերունջ՝ առանց հսկողության և «ղեկավար ցուցումների», որոնք նախկինում տալիս էր նրան ձեր եռաչափ գիտակցությունը:

Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, զավակներ՝ ու, գտնել ոսկե միջինը, անհրաժեշտ հավասարակշռությունը, որը թույլ կտա ձեզ շարունակել ձեր առաջընթացը Համբարձման ճանապարհով այնպես, որ ձեր գիտակցությունն ու ֆիզիկական մարմինը լիակատար ներդաշնակության մեջ լինեն միմյանց հետ:

Եվ դրա համար պետք է անել ամեն ինչ, որ նրանց թրթիռային խզվածքը նվազագույն լինի:

ԷՆԵՐԳԻԱՆԵՐԻ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄ

Եվ այսպես, շարունակենք մեր գրույցը, թե ինչպես կարող եք հավասարակշռություն պահել ձեր գիտակցության և մարմնի միջև, որ խուսափեք հակվելուց դեպի մեկը կամ մյուսը:

Դրա համար հարկավոր է սովորել շտկել սեփական թրթիռներն այնպես, որ դրանք լինեն այն մակարդում, որը թույլ կտա ձեր ֆիզիկական մարմնին հաղթահարելու ձեր նոր գիտակցությունից իրեն բաժանող անջրպետը առանց ավելորդ գերլարումների, հարմար ու անցավ ձևով:

Եվ դրա համար ես ձեզ կտամ մի թեթև պրակտիկա, որը կանվանենք **«Էներգիաների փոխներարկում»**:

Փորձեք պատկերացնել ձեր գիտակցությունն ու ֆիզիկական մարմինը երկու սիլուետների տեսքով: Նրանցից մեկը նուրբնյութական է: Այն հսկայական չափեր ունի, գեղեցիկ է, երփներանգվում է ծիածանի բոլոր գույներով (ձեր չակրաների և նուրբ մարմինների գույներով):

Այս սիլուետը ծայրաստիճան նոսր է, բաղկացած է բյուրավոր մշտաշարժ մասնիկներից: Այն խորհրդանշում է արդեն Հինգերորդ չափման մեջ գտնվող ձեր **գիտակցությունը**: Իսկ մյուսը նույն հասակն ունի, ինչ դուք: Դա ձեր ֆիզիկական մարմինն է:

Այն ամուր է ու պինդ, իսկ ծիածանագույն եզրաշերտը, որը շրջապատում է նրան, ավելի թանձր գույներ ունի, քանի որ նրա նուրբ մարմինները բավական կիպ խտացած են:

Սովորե՛ք ակնթարթորեն վիզուալիզացնել այդ երկու սիլուետները, որովհետև այսուհետ բավական հաճախ պիտի անեք այդ:

Եվ ահա թե ինչու:

Հենց զգում եք, որ ձեր կյանքում ստեղծված իրավիճակը քաշում է ձեզ եռաչափ աշխարհ և ստիպում անել այն, ինչ այլևս չի ընդունում ձեր Հոգին, կամ էլ երբ տկարություն եք զգում

ձեր ֆիզիկական մարմնում, օգնություն խնդրեք ձեր գիտակցությունից, որն արդեն շատ է առաջադիմել:

Եվ պատկերացրեք, ինչպես է այդ հսկայական սիլուետն իր ձեռքը մեկնում ու տանում ձեզ հեռու, ինչպես ավագ եղբայր, որն իր հովանու տակ է առնում դեռ բոլորովին անփորձ իր կրտսեր եղբորը, որպեսզի պաշտպանի նրան վտանգից:

Դուք բռնում եք նրա ձեռքը և զգում, ինչպես է նրա միջոցով ձեր մեջ ներարկվում ամենաբարձր թրթռանքի էներգիան: Ձեր մարմինն աստիճանաբար լցվում է այնպիսի ջերմությամբ ու Միրով, որ ձեր բոլոր փորձանքներն ու դժբախտությունները, բոլոր հիվանդությունները խամրում են այդ ամենահաղթ Աստվածային էներգիայի հանդիման:

Իհարկե, դա չի նշանակում, թե պիտի հետ քաշվեք ձեր կյանքում ծագող խնդիրներից և ապավինեք միայն ճակատագրի կամքին: Բայց ստանալով նման հզոր էներգետիկական սնուցում ձեր բարձրաթրթիռ գիտակցությունից, դուք իրավիճակին կնայեք բոլորովին այլ հայացքով:

Ձեր վերաբերմունքը տեղի ունեցածի նկատմամբ արմատապես կփոխվի: Խուճապի, վախի և շվարթության փոխարեն դուք ձեր մեջ ուժ կզգաք բոլոր խնդիրները լուծելու հանգիստ, իմաստուն, անշտապ կերպով և գտնելու միակ ճիշտ լուծումը՝ այն, որ կհուշի ձեր Հոգին:

Փորձե՛ք ներմուծել այս պրակտիկան ձեր կյանքի մեջ, սիրելիներս, և շատ շուտով կհամոզվեք, թե որքան գործուն ու արդյունավետ է այն՝ չնայած իր ողջ թվացյալ պարզությանը:

Եվ ես օրհնում եմ ձեզ դրա համար:

ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՀԵՏ

Այսօր ես ուզում եմ ձեզ նվիրել հզորագույն մի մեղիտացիա, որը կարելի է անվանել **«Վերամիավորում Տիեզերական կրկնակի հետ»:**

Չնայած որ այս մեղիտացիան իր մեջ ներառել է մի քանի այլ պրակտիկաներ, ժամանակի հետ դուք կսովորեք այն կատարել շատ արագ, և ես վստահ եմ, որ շատերիդ համար այն ամենասիրելի մեղիտացիան կդառնա:

Եվ այսպես, կանչեք ձեր բոլոր Երկնային օգնականներին:

Մտեք մեղիտատիվ վիճակի մեջ և խոր շնչեք:

Տարրալուծվեք Ոգու մեջ՝ այդ գրնգուն Աստվածային լռության . . .

Այնուհետև դարձեք **Միասնական սիլուետ**, զգալով, թե ինչպես է մեծանում ձեր ֆիզիկական մարմինը՝ նախ հասնելով Բարձրագույն Եսի չափերին, հետո նաև՝ Աստվածային Եսի...

Հետզհետե ձեր Աստվածային Եսը սկսում է ավելի ու ավելի նուսրանալ, մինչև որ դառնում է այնքան մեծ, որ իրենով է լցնում ողջ Երկիրը...

Դուք զգում եք, որ Երկրի հետ **Միասնական սիրտ** ունեք:

Այն տրոփում է ձեր Մայր Երկրի սրտի հետ համահունչ՝ միասնական ռիթմով...

Դուք արդեն գիտեք այդ ռիթմը և գրեթե վայրկենապես ռեզոնանսի մեջ եք մտնում նրա հետ...

Եվ դրանից հետո կանչում եք ձեր **Տիեզերական կրկնակին**:

Խնդրեք նրան՝ մտնել ձեր մարմնի մեջ, միանալ նրա բոլոր մասերին, բոլոր օրգաններին և տարրալուծել նրանց մեջ կուտակված ողջ բացասական էներգիան, բժշկել ձեր հիվանդությունները...

Խնդրեք նրան՝ ձեր մարմինը լցնել հարազատ Աստվածային էներգիայով, որը սկիզբ կդնի նրա փոխակերպմանը լուսային բյուրեղային մարմնի: Դուք կզգաք, ինչպես աստիճանաբար ձեր թագի չակրայի միջոցով ներս կհորդի ձեր հարազատ Սիրո էներգիան, որն այնքան ծանոթ կթվա ձեզ:

Անցնելով Աստվածային և Բարձրագույն Եսերի միջով, այն կհասնի ձեր ֆիզիկական մարմնին, որը կլցվի ջերմությամբ ու Երանությամբ: Դուք կզգաք, ինչպես է ձեր Տիեզերական կրկնակի էներգիան թափանցում ձեր մարմնի ամեն բջիջը, լցնելով բոլոր օրգանները, ողջ արյունատար համակարգը, ոսկրային կառուցվածքը, մկանային հյուսվածքները, ամբողջ մաշկը պսպղուն Լույսով...

Ձեզնից ոմանք ծակծկոցներ կզգան, ոմանք՝ սառնություն, ոմանք՝ ջերմություն, ոմանք էլ՝ մանրիկ թրթիռներ...

Դուք կարող եք հաղորդակցվել ձեր Տիեզերական կրկնակի հետ ինչպես ձեր լավագույն ընկերոջ: Վստահեք նրան ձեր Հոգու բոլոր գաղտնիքները, խնդրեք բուժել ձեր հիվանդությունները...

Եվ կզգաք, որ նա իսկույն արձագանքում է ձեր հայցին: Նրա էներգիան կսկսի աշխատել կետայնորեն, կենտրոնանալով ձեր բոլոր խնդրական (պրոբլեմային) տեղերի վրա: Բհարկե, նա ինքն էլ է տեսնում դրանք, բայց այդքան ակնհայտորեն դրսևորվում է միայն ձեզ հաճույք պատճառելու և ցույց տալու համար, որ լսում է ձեզ: Նա ուզում է, որ դուք իմանաք՝ դուք մենակ չեք և ինքը Տիեզերքն է ձեզ հղում իր օգնությունն ու աջակցությունը, որ դուք կատարեք Անցումը ձեր ֆիզիկական մարմնով...

Այս մեղիտացիան կլինի այն վերջին ակորդը, որը կօգնի ձեզ հասնել Ոգու, Հոգու և Մարմնի Եռամիասնության:

Օրհնու՛մ եմ ձեզ դրա համար, զավակնե՛րս:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա և ավարտին մոտեցավ Ոգու, Հոգու և Մարմնի Եռամիասնությանը նվիրված իմ ուղերձների շարքը:

Եվ այսօր ես ուզում եմ ձեզ վերստին հիշեցնել ամենակարևորը, որը հարկավոր է մի՛շտ մտապահել, որը պիտի առաջնորդի ձեզ կյանքում և այսուհետ դառնա ձեր գոյության հիմքը:

Առաջին: Ձեր գիտակցությունը միշտ առաջնային է:

Նա՛ է դեկավարում ձեր մտքերն ու զգացմունքները: Նա՛ է «շինանյութ» մատակարարում ձեր իրականության համար, որը կարող է լինել մոայլ ու անլույս, բայց կարող է լինել նաև պայծառ ու խնդուն: Նա՛ է ձևավորում ձեր մարմինը:

Եվ եթե կարողանաք ազատվել դարերով ձեզ ներշնչված մտքերից, թե տարիների հետ մարմինն անխուսափելիորեն ծերանում, հիվանդանում ու թառամում է, եթե լիովին գիտակցեք, որ այդ ամենը կատարվում է ՄԻԱՅՆ ձեր «անառողջ» մտքերից ու զգացմունքներից, ապա կդադարեք ծերանալուց ու հիվանդանալուց: Ձեր օրգանիզմը լոկ սպասում է ձեր նոր, Աստվածային գիտակցության «հրահանգներին»: Ձեր մարմինը կսկսի ինքնավերականգնվել, ջահելանալ՝ աչքի առաջ փթթելով և վեր մղվելով ձեր գիտակցության բարձր թրթիռների ներքո:

Երկրորդ: Ոգին սկզբնաղբյուրն է համայն Աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի:

38

Դա Անսահման և Անպայման Սիրո էներգիան է, որը միշտ ապրել է ամեն մարդու մեջ: Այդ Երկրի դժվարին կենսապայմաններն են քշել նրան ամենահետին անկյունը՝ ձեր ենթագիտակցության խոր «նկուղը»:

Եվ հիմա եկել է ժամանակը, որ ամեն մարդ լույս աշխարհի հանի նրան, որ նա գրավի իր օրինական տեղը ձեր Գիտակցության, ձեր Հոգու և Աստվածային մարմնի մեջ: Դուք պետք է դառնաք ՈԳՈՎ ՈՒԺԵՂ, սակայն արդեն ոչ այն իմաստով, որ դարեր ի վեր հաղորդել են դրան եռաչափ աշխարհի մարդիկ՝ հարկադրված լինելով ապրելու տեղ նվաճել իրենց համար արևի տակ:

Ձեր Ոգին՝ ձեր Անպայման Մերը, պիտի այնքան ուժեղ դառնա, որ կարողանա փոխել ձեր իսկ իրականությունը, ձեր մերձավորների, երկրի, մոլորակի, Գալակտիկայի, Տիեզերքի կյանքը, քանզի ոչ մի բան աշխարհում ուժեղ չէ Սիրուց . . .

Երրորդ: Դուք պիտի սովորեք ապրել Հոգով:

Միայն Հոգին, այլ ոչ թե միտքը, ունակ է փոխակերպելու ձեր Գիտակցությունը Աստվածայինի և ուրեմն դուրս բերելու ձեզ այն ճանապարհի վրա, որը կտանի դեպի Համբարձում:

Ձեր Հոգին այնքան բարդ է ու բազմաչափ, որ առայժմ շատ քչերին է տրված լիովին հասու դառնալ նրա սրբազան խորությանն ու բովանդակ վեհությանը:

Բայց մի շտ հիշեք, որ ձեր Հոգին է հենց Աստծո այն կայծը, որից «հուր» կբոցավառվի՝ այրելով իր մեջ եղած ամեն օտարամուտ, անպետք, արհեստական, օտարածին, արտաքուստ պարտադրված բան:

Չորրորդ: Ձեր իսկական Մարմինը Աստվածային կատարյալ «գործիք» է՝ կյանքն իր բոլոր դրսևորումներով ճանաչելու համար:

Դա Ոգու և Հոգու զետեղարանն է, որոնք իջնում են նրա մեջ դեռևս նոր ու անհայտ փորձառության համար: Եվ միայն պահելով Ոգու, Հոգու և Մարմնի Եռամիասնությունը, մարդը կարող է լիովին կատարել իր նախասահմանումը ի բարձրագույն բարօրություն բոլորի:

Եվ ես օրհնում եմ ձեզ դրա համար, զավակներ քս:

Ձեզ անհունորեն սիրող Բացարձակ-Հայրը խոսեց ձեզ հետ

